AZG NEW PDF.qxd 15/03/2010 23:13 Page 1

Ազգ
Azg
16 ՄԱՐՏ 2010 ԵՐԵՔՇԱԲԹԻ 45 (4426)
ISSN: 1829-1651
9 771829 165003 10045

# Իսպանիայում պայքարում են ռուսական մաֆիայի դեմ, որում կան նաեւ հայեր եւ վրացիներ

Իսպանական LaVaguardia թերթի տեղեկացմամբ՝ Իսպանիայում ոստիկանությունը խոշոր գործողություններ է իրականացնում ընդդեմ ռուսական մաֆիայի: Թերթը նշում է, որ այս գործողությունը ամբողջ Եվրոմիության տարածքում, ընդդեմ ռուսական մաֆիայի իրականացվող 69 գործողություններից մեկն է: Ընդ որում արդեն ձերբակալվել է 24 մարդ, որոնց մեջ կան Հայաստանի եւ Վրաստանի քաղաքացիներ:

Այժմ իսպանական ոստիկանությունը խուզարկություններ է անցկացնում Մադրիդում, Բարսելոնում եւ Վալենսիայում գտնվող որոշ կառույցներում:

Հ. Ա.

## ՀԱՄԱՌՈՏ

# «Իլհամ Ալիեւը պետք է որոշիչ քայլ ձեռնարկի»

**Anspress գործակալության տեղեկացմամբ, Բաքվում գտնվող ԵԱՀԿ ԽՎ-ի նախագահ Ժոաո Սուարեշը հայտարարել է, որ ղարաբաղյան հակամարտության լուծումը կախված է ադրբեջանական կողմից, ավելի կոնկրետ՝ Իլհամ Ալիեւից. «Ես հուսով եմ, որ երկու երկրների ղեկավարները կդրսեւորեն համապատասխան կամք, պետք է որոշիչ քայլեր ձեռնարկել: Հուսով եմ, որ նախագահ Ալիեւն այնպիսի որոշիչ քայլ կանի, որ դրանով իր անունը կմտցնի Ադրբեջանի պատմության մեջ՝ որպես մարդ, ով լուծեց ղարաբաղյան հակամարտությունը», շեշտել է Սուարեշը:**

**Սուարեշը օրեր առաջ Երեւանում էր, որտեղ հանդիպեց նաեւ ԼՂՀ ԱԺ նախագահ Աշոտ Ղուլյանին: Սուարեշը Երեւանում մեկ անգամ չէ, որ նշեց, որ ղարաբաղյան հակամարտության լուծման մեջ պետք է բացառել ռազմական ճանապարհը եւ բռնությունը. «Խնդրի կարգավորման լավագույն ուղին խաղաղ բանակցություններն են», հայտարարել էր Երեւանում Ժոաո Սուարեշը:**

# Պենտագոնի ղեկավարը սխալ է համարում 252-րդ բանաձեւի ընդունումը

**Այս մասին ԱՄՆ պաշտպանության նախարար Ռոբերտ Գեյթսը նշել է Al Arabiya Broadcast-ին տված հարցազրույցում: «Ինձ անհանգստացնում է այդ հարցը: Ես պետք է նշեմ, որ բանաձեւը ընդունվել է Ներկայացուցիչների պալատի միայն մեկ հանձնաժողովի կողմից (ինչպես նաեւ ԱՄՆ 42 նահանգների կողմից-Հ. Ա.): Մենք այն համարում ենք սխալ: Թուրքիան եւ Հայաստանը առաջընթաց են գրանցում հաշտեցման ուղղությամբ: Արձանագրությունները էլ պատրաստվել են հենց դրա համար: Կարծում եմ՝ դա է անհրաժեշտ գործընթացը, իսկ նման բանաձեւերը կարող են վնաս հասցնել թուրք-ամերիկյան հարաբերություններին: Հուսով ենք, որ Կոնգրեսն ու Ներկայացուցիչների պալատն ավելի հեռու չեն գնա այդ բանաձեւի հարցում», հայտարարել է Պենտագոնի ղեկավարը: Հատկանշական է, որ Գեյթսը սխալ է բնութագրում հայկական բանաձեւի ընդունումը ոչ թե նրա անհիմնության պատճառով, ինչպես պնդում է «բարեկամ Թուրքիան», այլ՝ հանուն Վաշինգտոն-Անկարա բարեկամության պահպանման:**

Հ. Ա.

# Պատրիարք Կիրիլը Հայաստանում

ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Մոսկվա



Մոսկվայի եւ Համայն Ռուսիո պատրիարք Կիրիլի այցը Հայաստան կրոնական եւ, առանց չափազանցության, քաղաքական կարեւոր իրադարձություն կդառնա մեր երկրի կյանքում: Քանզի պատրիարքը, լինելով իր ժողովրդի բարձրագույն հոգեւոր առաջնորդը, ընկալվում է նաեւ որպես ճանաչված, ազդեցիկ քաղաքական գործիչ:

Ես առիթ եմ ունեցել հանդիպելու այն ժամանակ դեռեւս Մոսկվայի պատրիարքարանի արտաքին եկեղեցական կապերի բաժնի նախագահ, բայց արդեն Ռուս ուղղափառ եկեղեցու երկրորդ դեմքը համարվող միտրոպոլիտ Կիրիլի հետ: Ես Հայ եկեղեցու տեղի թեմի առաջնորդ Եզրաս սրբազանին խնդրեցի միջնորդել հարցազրույցի համար, եւ երբ նա դիմել էր միտրոպոլիտին, ապա վերջինս ամենայն բարյացակամությամբ ժպտալով պատասխանել էր՝ սրբազան, ես ինչպես կարող եմ մերժել Հայ եկեղեցուն:

Ինչո՞վ է առանձնանում Ռուս եկեղեցու նոր (աշխարհական անունով՝ Գունդյաեւ Վլադիմիր Միխայլովիչ) հովվապետը: Նախ եւ առաջ հզոր ինտելեկտով կրոնական եւ աշխարհիկ հարցերում: Փայլուն հռետոր է: Աչքի է ընկնում կրոնական-ազգային-պետական-մոլորակային մտածողությամբ: Խորագիտակ փիլիսոփա է, պատմաբան, ակտիվ հասարակական գործիչ, տիրապետում է մի քանի օտար լեզուների: Ռուսաստանում նրան դասում են այն հոգեւոր առաջնորդների շարքը, որոնք իրենց ներքին հոգեւոր ներուժը, կենտրոնացումը տարածում են երկրի, ժողովրդի, աշխարհի վրա: Պատրիարքը հիանալի է հասկանում, որ խորհրդային կայսրության անկումից հետո ուղղափառությունն ազգային ինքնության ձեւավորման գլխավոր լծակներից մեկն է: Նա հաճախ է ընդգծում, որ չնայած եղեկեցին անջատ է պետությունից, սակայն անջատ չէ հասարակությունից, նա նրա մի մասն է, եւ այդ հասարակությունը պետք է առավելագույնս մերձեցնել եկեղեցուն, որ նա պետք է դառնա եկեղեցու մի մասը: Լայն իմաստով պատրիարքը ձգտում է դառնալ ռուսական նոր քաղաքակրթության ջատագովներից մեկը:

*Տես էջ 3*

# «Թոփ-թեմաներ»՝ Ազգային ժողովի քառօրյային հարակից

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

**Թեեւ երեկ գարունն իսկապես մտել էր խորհրդարան գեղանկարիչ Հրանտ Թադեւոսյանի՝ Թաթոսի հիանալի կտավների տեսքով, սակայն խորհրդարանական աշխատանքը սովորական իր ընթացքի մեջ էր՝ ձմեռվա վերջին ամսին սկսված եւ երեկ շարունակվող «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» օրինագծի եւ հարակից փաթեթի քննարկումը ոչ միայն շարունակվում էր, այլեւ հիմնական զեկուցող կառավարության ներկայացուցչի բացակայությունն արժանացավ ԱԺ նախագահի խիստ դիտողությանը. «Միգուցե որոշում ընդունեինք, մարդ ուղարկեինք՝ հարցերին պատասխաներ, արհամարհական վերաբերմունքն, իմ կարծիքով, անհիմն ու անտեղի է, եւ ես վարչապետի հետ շատ լուրջ զրույց կունենամ այդ թեմայով, եւ ընդհանրապես մշտական հանձնաժողովների նախագահներին էլ հորդորում եմ, որ իրենց եւ ԱԺ արժանապատվությունը բարձր պահեն: Դա միայն իրենց արժանապատվությունը չէ, նաեւ իմ արժանապատվությունն է, եւ թափթփուկ վերաբերմունքին պիտի վերջ տրվի՞, թե՞ չէ: Այ քեզ բան: Ահարոն (ԿԲ խորհրդի անդամ Ահարոն Չիլինգարյանի մասին էր խոսքը), դու իրավունք չունես մոտենաս ամբիոնին, խոսես: Ուղղակի ուզում եմ, որ դու փոխանցես իմ հորդորը, եւ ես քվեարկության չեմ դնելու, մինչեւ ֆրակցիաների, պատգամավորների պատասխանները չտրվեն: Եվ ընդհանրապես՝ այս պահին կանոնակարգը պահանջում է քննարկումը դադարեցնել եւ հետաձգել, մարդիկ խոսում են՝ ոչ ոք չի լսում, ո՞վ պետք է հարցերի պատասխանը տա: Այ քեզ բան»:Կառավարության չներկայացած ներկայացուցիչը Վաչե Գաբրիելյանն է, որը ներկա չէր եւ չէր լսում քննադատությունն ու բարձրացված հարցերը:**

*Տես էջ 2*

# Նոր նախարարներ

Նախագահ Սերժ Սարգսյանի երեկվա հրամանագրով ՀՀ տրանսպորտի և կապի նախարար Գուրգեն Սարգսյանը ազատվել է նախարարի պաշտոնից, որին այդ պաշտոնում կփոխարինի Մանուկ Վարդանյանը: Նախագահի մեկ այլ հրամանագրով ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար Մհեր Շահգելդյանը ևս ազատվել է պաշտոնից, որին կփոխարինի Արմեն Երիցյանը:







# Չավուշօղլուն՝ ցեղասպանության բանաձեւերի մասին

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի նախագահ **Մեւլութ Չավուշօղլուն** Ղազախստանում հայտարարել է, որ ինքը չի կարծում, թե «Շվեդիան գնում է ԱՄՆ-ի հետքերով»՝ ընդունելով Հայոց ցեղասպանության մասին բանաձեւ. «Ես չեմ կարծում նաեւ, որ Մեծ Բրիտանիայում կընդունվի հայկական բանաձեւը», նշել է Չավուշօղլուն: Հիշեցնենք, որ բրիտանական խորհրդարանի Համայնքների պալատը պատրաստվում է ապրիլի 30-ին քննարկել ցեղասպանության վերաբերյալ բանաձեւ, իսկ սրան նախորդել է նույն Համայնքերի պալատի հայտարարությունը, որով ճանաչվել էր հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում:

Իր այս հայտարարությամբ Չավուշօղլուն, փաստորեն, շարունակում է Թուրքիայի ժխտողական քաղաքականությունը: Մինչդեռ նա ի պաշտոնե ներկայացնում է ոչ թե Թուրքիան, այլ միացյալ Եվրոպան, որտեղ Եվրախորհուրդը վաղուց արդեն ճանաչել է Հայոց ցեղասպանությունը:

Հ. Ա.

# Անկարան երաշխիքներ է պահանջում Վաշինգտոնից

## *Որպեսզի բանաձեւը չմտնի Ներկայացուցիչների պալատ եւ Օբաման ապրիլի 24-ին «ցեղասպանություն» բառը չարտասանի*

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

«**Ազգը**» նախորդ համարում, անդրադառնալով Շվեդիայի խորհրդարանի ցեղասպանության բանաձեւն ընդունելու մարտի 11-ի որոշմանը, նշել էր, որ Թուրքիան դրան արձագանքեց բուռն հակազդեցությամբ եւ չեղյալ հայտարարեց վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի՝ մարտի 17-ին Ստոկհոլմ նախատեսվող այցը: Կառավարամետ «Ենի շաֆաքը» երեկ, վկայակոչելով պետնախարար Ջաֆեր Չաղլայանին, տեղեկացրել է նաեւ մինչեւ ապրիլի 24-ը Թուրքիայից ԱՄՆ բոլոր տեսակի այցելությունները սառեցնելու կառավարական որոշման մասին:

Ըստ երեւույթին, բացառություն էր կազմում վարչապետ Էրդողանի այցելությունը՝ մասնակցելու ԱՄՆ նախագահ Բարաք Օբամայի նախաձեռնությամբ ապրիլի 12-13-ը Վաշինգտոնում «Միջուկային զենքից զերծ աշխարհ» նշանաբանով հրավիրվող գագաթաժողովին, որ նախարարների խորհրդի երեկվա նիստում քննարկման էր դրվել մասնակցության հարցը:

Հոդվածը գրի առնելու պահին նիստը դեռեւս շարունակվում էր: Այսինքն՝ քննարկման արդյունքները հայտնի չէին: Սակայն, անկախ արդյունքներից, արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուի գլխավորությամբ մի խումբ նախարարներ, ինչպես երեկվա համարում նշել է «Միլլիեթը», պատճառաբանելով, թե ԱՄՆ-ն Թուրքիայի կարիքն ունի, ուստի Անկարան մինչեւ ապրիլի 24-ը չպետք է ընկրկի Վաշինգտոնի առջեւ, դեմ էին, որ Էրդողանը մեկնի:

Մյուս խումբը, ընդհակառակը, ելակետ ընդունելով աշխարհում ԱՄՆ-ի միակ լիարժեք գերտերություն լինելու հանգամանքը, պահանջում էին, որ Անկարան հրաժարվի Վաշինգտոնի նկատմամբ որդեգրած լարվածության քաղաքականությունից, իսկույն հետ ուղարկի իր դեսպանին, որպեսզի ի վիճակի լինի լոբբիստական գործունեությամբ հակակշռել ցեղասպանության ճանաչման հայկական ջանքերին եւ վերականգնել երկկողմ հարաբերությունների նախկին մակարդակը:

Խնդիրը, սակայն, նախարարների խորհրդի նիստը չէ, ոչ էլ նրանց տարակարծությունը, այլ ապրիլի 12-13-ին, այսինքն՝ ապրիլի 24-ի նախօրեին, գագաթաժողովի շրջանակում նախագահ Օբամայի հետ հանդիպելու վարչապետ Էրդողանի հնարավորությունը: Դրա կարիքը, հակառակ արտգործնախարար Դավութօղլուի, զգում է ոչ թե Վաշինգտոնը, այլ հենց Անկարան: Ինչո՞ւ: Այդ հարցին պատասխանում է նույն «Միլլիեթը»:

*Տես էջ 3*

AZG NEW PDF.qxd 15/03/2010 22:59 Page 1



# Գագիկ Ծառուկյան. «Մենք պետք է ջանանք, որ հարկերը թուլացվեն, այլ ոչ թե խստացվեն»

Երեկ ԲՀԿ նախագահ **Գագիկ Ծառուկյանն**, ըստ իր սովորության, ԱԺ հերթական քառօրյայի սկզբում պատասխանեց լրագրողների հարցերին: Հայաստանի ժողովրդավարությունը քննադատող ԱՄՆ պետքարտուղարության զեկույցի մասին Գ. Ծառուկյանը կարճ կապեց. «Անտեղի քննադատում են, թող իրենք իրենց նայեն, հետո մեզ քննադատեն»: Նոր հարկատեսակներ մտցնելու թերեւս չհաջողված փորձն այսպես մեկնաբանեց. «Այսօր տնտեսական ճգնաժամն ավարտված չէ, մենք պետք է կարողանանք, որ հարկերը թուլացվեն, այլ ոչ թե խստացվեն. որոշ օրենքներ պետք է սառեցվեն, ամբողջ աշխարհում դա ընդունված կարգ է: Տնտեսական ճգնաժամի ժամանակ օրենքները պետք է ծառայեցվեն, որ ժողովուրդը կարողանա գոյատեւել, կարողանանք այդ ծանր պայմաններից միասնական ուժերով դուրս գալ: Աշխարհում չկա մի տեղ, որտեղ տնտեսական ճգնաժամի ժամանակ հարկային իրավունքները խստացվեն», ասաց նա՝ ավելացնելով, թե տնտեսական ճգնաժամից հետո կարելի է խստացման ճանապարհը բռնել: Լրագրողները հիշեցրին էկոնոմիկայի նախարար Ներսես Երիցյանի ասածը, թե Հայաստանում տնտեսական ճգնաժամն ավարտվել է.«Աշխարհով մեկ ոչ մեկը դեռ չի ասել, թե ճգնաժամն ավարտվել է: Դեռ հնարավոր է, որ երկրորդ փուլ լինի: Չորս-վեց տոկոս աճ ունեցող պետությունները դեռ չեն համարձակվում նման բան ասել», ասաց՝ Ներսես Երիցյանի մասով ավելացնելով. «Ինքը տեղում չէ եւ չի տիրապետում ոչ էկոնոմիկային, ոչ երկրի տնտեսական վիճակին»: Հարցին, թե նախագահ Սարգսյանի մոտ այս մասին ասե՞լ է, նկատեց. «Սերժ Սարգսյանը դա գիտի եւ համապատասխան քայլեր կանի՝ ամեն ինչ չի կարելի թողնել Սերժ Սարգսյանի վրա»: Գազի գնի թանկացման վերաբերյալ արձագանքն այսպիսին էր. «Ամեն ինչի վրա էլ ազդելու է, դրանից հետո հոսանքն է թանկանալու, տրանսպորտը, ամեն ինչը, հացը...»:

Ծառուկյանը մեկ անգամ ասել էր, որ նախապայմանների դեպքում հայ-թուրքական արձանագրությունների վերաբերյալ դիրքորոշումը ԲՀԿ-ն կվերանայի. «Մենք կողմ ենք հարեւանների հետ սահմանի բացմանը, դիվանագիտական կապի հաստատմանն առանց նախապայմանների: Մենք առաջին օրվանից ասել ենք, Ցեղասպանությունն առեւտրի առարկա չէ եւ չի կարող դառնալ: ԼՂ խնդիրը նախապայման չի կարող լինել հայ-թուրքական հարաբերությունների համար: Իսկ Ադրբեջանի նախագահի պատերազմական հայտարարությունները չեն կարող ստիպել, որ միակողմանի քայլ անենք՝ հօգուտ նրանց: Պատերազմից խուսափելու համար մենք պետք է շատ ուժեղ լինենք ե՛ւ ռազմական, ե՛ւ տնտեսական, ե՛ւ ֆինանսական, ե՛ւ բարոյահոգեբանական: Միասնական պետք է լինենք, որ նրանք մեր ուժը զգալով՝ բանակցություններով խնդիրը լուծեն, մենք էլ կարողանանք այդ խնդիրն առանց պատերազմի լուծել»: Իսկ հայ-թուրքական հարաբերությունները, Գ. Ծառուկյանի կարծիքով, փակուղի չեն մտել. «Մենք ճանապարհ չենք փակել, 1993 թ. Ղարաբաղի պատերազմի ժամանակ իրենք են փակել, իրենք էլ բացելու են: Մենք գնում ենք ցույց տալու, որ մեր ազգը խոսքի տեր է՝ ճանապարհ բացելու, դիվանագիտական կապ հաստատելու համար կողմ ենք, բայց առանց նախապայմանների՝ ոչ ԼՂՀ խնդրի, ոչ ցեղասպանության ճանաչման խնդրի հաշվին: Պետք է սպասենք մինչեւ ապրիլի քսանչորսը եւ հետո մեր քայլը կատարենք», ասաց Գ. Ծառուկյանը:

Ս. Խ.

ԱՂԱՆԴՆԵՐԸ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

# Դպրոցներում կրոնական ուղղվածության քարոզներ են իրականացնում

Կան դպրոցներ, որոնց տնօրեններն ու ուսուցչական անձնակազմի որոշակի մասը ներքաշված են կրոնական որեւէ կազմակերպության, աղանդի մեջ ու դասաժամն օգտագործում են աշակերտներին կրոնի պատմություն դասավանդելու համար: Իսկ կրթության օրենքով ամրագրված է, որ կրթությունն ունի աշխարհիկ բնույթ, եւ դպրոցներում դավաբանական խնդիրների քարոզում չպետք է իրականացվի: Վերնշյալ օրենքի խախտման բազմաթիվ փաստեր է արձանագրել «Համագործակցություն հանուն ժողովրդավարության» կենտրոնի նախագահ **Ստեփան Դանիելյանը**: Ուսումնասիրությունների հիման վրա շուտով կհրապարակվի զեկույց, որտեղ մասնանշված են այն դպրոցներն ու տնօրենները, որոնք ներքաշված են կրոնական քարոզչության մեջ: «Դպրոցներում որեւէ կրոնական ուղղվածության ներկայացուցիչ իրավունք չունի քարոզ իրականացնելու. եթե կատարվում է քարոզ, պետք է պատիժ սահմանվի», նկատում է նա:

Քայքայիչ պաշտամունքից տուժածների օգնության եւ վերականգնողական կենտրոնի նախագահ **Ալեքսանդր Ամարյանը** պատմում է, որ որոշ դպրոցներում ժամանակին կային ուսուցիչներ, որոնք Եհովայի վկաներ էին եւ դասաժամերին դասավանդում էին կրոնի պատմություն: Նա զարմանում է, երբ ասում են, որ Հայաստանում կրոնական կառույցներին ճնշում են: Իր հիմնավորմամբ՝ դա հնարավոր չէ, որովհետեւ Հայաստանում չկա համապատասխան օրենք նրանց ճնշելու համար: Ճնշում են միայն այն դեպքում, երբ կրոնական կազմակերպությունները կապված են բիզնեսի հետ: «Հայաստանում կրոնական կառույցները պետություն են պետության մեջ: Որոշ չափով ճնշում են Եհովայի վկաներին, նրանց դատապարտում զինծառայություն չանցնելու համար», նշում է փորձագետը:

Ըստ Ամարյանի՝ թեպետ խոսում են հոգեորության մասին, սակայն օրենքով ամրագրված չէ նաեւ, թե ինչ է նշանակում հոգեորությունը: Ինչ վերաբերում է կրոնական կազմակերպություններին, նրանց աշխատանքը թափանցիկ չէ. հաճախ գործում են բարեգործության անվան տակ:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# «Գնորդը միշտ ճիշտ է» կարգախոսը Հայաստանում չի գործում

«Ի տարբերություն ողջ աշխարհի, երբ սպառողն է թելադրում կանոնները, Հայաստանում հակառակն է նկատվում, որեւէ իրավունք, որ բխում է սպառողների շահերից, Հայաստանում չի պահպանվում»: Սպառողների շահերի խնդիրներն արձանագրում է Հայաստանի սպառողների ազգային ասոցիացիայի նախագահ **Մելիտա Հակոբյանը**: Առանձնացնելով անվտանգության իրավունքը՝ Հակոբյանը փաստում է, որ թարգմանությունները փակցնում են հենց ապրանքի ժամկետի եւ արտադրության պիտակների վրա, որպեսզի սպառողը դրանք չտեսնի: Մեծ խնդիր է նաեւ տեղեկատվության տրամադրումը, որովհետեւ թանկ հաճույք է: Ասոցիացիան միայն մեկ ամսագիր է տպագրում, մինչդեռ սպառողն իրավունք ունի բազմատեսակ տեղակատվության՝ գների, ծառայությունների, դրանց որակի վերաբերյալ:

Որ խախտվում են սպառողների իրավունքները, Մելիտա Հակոբյանը չի ժխտում, սակայն դրանում մեղադրում է սպառողներին: «Եթե պետությունը հոգ չի տանում նրանց մասին, ապա իրենք պետք է պայքարեն ու պաշտպանեն իրենց իրավունքները», առաջարկում է նա:

Նա զարմանում է մարդկանց անտարբերությունից, մինչդեռ հենց սննդի վերաբերյալ սպառողները պետք է լինեն ուշադիր:

«Օրինակ, դեպքեր են եղել, երբ մարդիկ տուփով կոնֆետ են գնել եւ հետո պարզել են, որ հին է, սակայն չեն իմացել ում դիմեն՝ ապրանքի վրա ոչ մի հասցե նշված չի եղել», ասում է սպառողների ակադեմիայի աշխատակից Մելիտա Արիստակեսյանը՝ խորհուրդ տալով օգտվել տեղական արտադրությունից, քանի որ դրանք ավելի վերահսկելի են:

Հակոբյանը բազմաթիվ չլուծված խնդիրներ է նկատում հացի արտադրությունում: «Նկուղներում հաց արտադրողները չեն ցանկանում հարկային դաշտ մտնել, այդ պատճառով էլ խանութներում անհայտ ծագմամբ հացեր են վաճառվում, եւ ինչ-որ խնդիր առաջանալիս քաղաքացին չգիտե ում դիմի»:

Տկն Արիստակեսյանն անարդար որոշում է համարում նաեւ գազի եւ ջրի գների բարձրացումը: «Գազի բարձրացումը գոնե հասկանալի է, ներկրում ենք: Բայց ջուրը մերն է, չէ՞: Եվ սա այն պարագայում, երբ այդ ջուրը ֆրանսիական ընկերությունը սպառողին է հասցնում ժանգոտած խողովակներով: Ջրի որակի բարելավման առումով էլ առաջընթաց չի գրանցվում», ասաց նա:

Սպառողների իրավունքների պաշտպանները խորհուրդ տվեցին չմոռանալ «Գնորդը միշտ ճիշտ է» կարգախոսն ու օգտագործել նաեւ կյանքում:

Հ. Հ.

# Նախագահի մամուլի նորանաշանակ քարտուղար Արմեն Արզումանյանի պարզաբանումը



**ՀԱՐՑ:** Իրականությանը համապատասխանո՞ւմ են լուրերը, որ ՀՀ տրանսպորտի եւ կապի, ինչպես նաեւ արտակարգ իրավիճակների նախարարները հրաժարականի դիմումներ են ներկայացրել նախագահ Սերժ Սարգսյանին: Ո՞րն է հրաժարականների պատճառը:

**ՊԱՏԱՍԽԱՆ:** Այո, Գուրգեն Սարգսյանը եւ Մհեր Շահգելդյանը ներկայացրել են հրաժարականի դիմումներ: ՀՀ սահմանադրության համաձայն, կառավարության ղեկավարը համապատասխան միջնորդագրեր է ներկայացրել նախագահ Սերժ Սարգսյանին: Հրամանագրերի ստորագրվելուն պես աշխատակազմի մամուլի ծառայությունն այդ մասին տեղեկատվություն կտարածի: Իսկ ինչ վերաբերում է հրաժարականի պատճառներին, ապա, ինչպես գիտեք, կոալիցիոն հուշագրով վերոհիշյալ երկու ոլորտների պատասխանատվությունը դրված է «Օրինաց երկիր» կուսակցության վրա եւ ՕԵԿ-ն էլ հանդես է եկել նախարարների փոփոխությունների առաջարկությամբ:

# «Թոփ-թեմաներ»՝ Ազգային ժողովի քառօրյային հարակից

*1-ին էջից*

## ՕԵԿ-ը գետանցի ժամանա՞կ

Երեկվա մյուս «թոփ-թեման» ՕԵԿ նախարարների հետկանչն էր կուսակցության քաղաքական խորհրդի որոշմամբ: Արտակարգ իրավիճակների նախարար Մհեր Շահգելդյանին եւ տրանսպորտի եւ կապի նախարար Գուրգեն Սարգսյանին ՕԵԿ-ականները որոշել են հետ բերել կուսակցական աշխատանքի, նրանց փոխարեն կառավարություն գործուղելով վերջերս ՕԵԿ-ական դարձած փոխոստիկանապետ Արմեն Երիցյանին եւ կադաստրի նախկին պետ Մանուկ Վարդանյանին. առաջինը, ՕԵԿ փոխնախագահ **Հեղինե Բիշարյանի** տեղեկացմամբ, պետք է զբաղվի քաղաքական հարցերով, երկրորդը՝ ՕԵԿ նախընտրական խոստումների տնտեսական բլոկի իրականացման խնդիրներով: Մեր հարցադրմանը, թե հերթական անգամ քաղաքական նպատակահարմարությունը գերադասվում է գործադիրի բնականոն աշխատանքն անսպասելի ընդհատելով, Հ. Բիշարյանը չհամաձայնեց. նախ, որ բազմափորձ, կենսագրություն ունեցող մարդիկ են ուղարկվում գործադիր, որոնք շարունակելու են այնտեղից, որտեղ թողնում են Շահգելդյանն ու Սարգսյանը, երկրորդ՝ կուսակցության ռազմավարությունն ու մարտավարությունը պահանջում են, որ կուսակցության հիմնադիրներից մեկը զբաղվի քաղաքական հարցերով, տնտեսական հարցերը կոորդինացնի տնտեսությունը լավ իմացող Սարգսյանը: Վաղ մեկնարկած նախընտրական տրամաբանության մե՞ջ են այս փոփոխությունները: Ոչ, կուսակցությունները մշտապես մտահոգվում են իրենց գործունեությամբ, ՕԵԿ խմբակցության քարտուղար **Հովհաննես Մարգարյանն** էլ նկատեց, թե յուրաքանչյուր ընտրությունից հետո է արդեն նախընտրական շրջան՝ մինչեւ նոր ընտրություններ:

«Գուցե ֆորսմաժորային իրավիճա՞կ է սպասվում Հայաստանում, մենք չգիտենք, մանավանդ որ լուրեր կան, որ ՕԵԿ-ն ավելի ուշ դուրս է գալու կոալիցիայից» հարցին ի պատասխան՝ Մարգարյանը նկատեց. «Ֆորս-մաժորի համար ոչ քաղաքական, ոչ իրավական եւ ոչ էլ տնտեսական հիմքեր չեմ տեսնում... Իսկ կոալիցիայից դուրս գալու մասին խոսել անգամ չի կարելի՝ Սերժ Սարգսյանն ու Արթուր Բաղդասարյանը հավատարիմ են իրենց ստորագրած հուշագրին, մենք մեր կոալիցիոն գործընկերների հետ աշխատանքային ջերմ հարաբերություններ ունենք եւ շարունակելու ենք կոալիցիոն հուշագրի ռազմավարության իրականացումը»:

## Ապտակների պատասխանը

Երեկ հայ-թուրքական հարաբերություններին մեկ անգամ եւս անդրադարձ արեց ԱԺ նախագահը: Երբ «Ժառանգության» նախագահ **Արմեն Մարտիրոսյանը** նկատեց, թե թուրքական կողմից ապտակներ ենք ստանում, իսկ հայկական կողմը «Միջազգային պայմանագրերի մասին» օրենքում փոփոխություն ընդունելուց հետո չի կասեցնում գործընթացը եւ հետ չի կանչում արձանագրությունները, ապտակներին Հ. Աբրահամյանը համամիտ չէր. «Դատարկ խոսակցություններն ապտակներ չեն: Եթե Թուրքիայի իշխանությունն արձանագրություն է ստորագրում առանց նախապայմանի, հետո չի վավերացնում կամ սկսում է այդ արձանագրությունների ստորագրմանը հակառակ հայտարարություն անել, ես դրան լուրջ չեմ վերաբերվում եւ նման իշխանություններին լուրջ չեմ համարում: Այնպես որ՝ տեղին չէ նշել, որ մեզ ապտակում են: Ուղղակի ես գտնում եմ, որ նրանք անլուրջ են վերաբերվում իրենց իսկ ստորագրած արձանագրություններին: Ինչ վերաբերում է գործադիր իշխանություններին տված մեր լիազորություններին, կարծում եմ՝ դեռ մեկ շաբաթ է, որ գործադիրին տվել ենք այդ հնարավորությունը՝ իր ցանկությամբ հետ վերցնի արձանագրությունները: Իմ կարծիքով՝ արտաքին քաղաքականության համար պատասխանատու են երկրի նախագահն ու ԱԳՆ-ն, եւ դա իրենց իսկ որոշելու խնդիրն է: Մենք այդ լիազորությունը տվել ենք նրանց: Կփորձե՞ն իրենք դա իրականացնել, թե ոչ՝ իրենց գործն է: Ինչ վերաբերում է ԱԺ մեծամասնությանը, մենք բազմիցս մեր կոալիցիոն գործընկերների հետ քննարկել ենք եւ մեր որոշումների տերն ենք: Մեր առաջարկությունն է եղել, որ մենք այդ արձանագրությունները քննարկենք ԱԺ-ում այն ժամանակ, երբ Թուրքիան դրանք վավերացնի», այսպես պատասխանեց ԱԺ նախագահը:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԸ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

AZG NEW PDF.qxd 15/03/2010 22:06 Page 1



# Խելոք, թե չէ կհոխորտամ

## *Ադրբեջանը չի հասկանում, որ Լեռնային Ղարաբաղը Բաշկիրիա չէ, այլ արդեն անկախ հանրապետություն է*

Ադրբեջանը հայտնվել է անմտության եզրին: Սա փաստարկում չէ, այլ պնդում, որ ի թիվս շատ ապացույցների, օրերս ձեռք է բերել եւս մեկը: Երկրի արտաքին գերատեսչության ղեկավարը, ռազմատենչության «փոխանցիկ դրոշը» ուզում է կարծես խլել երկրի թագավորի ձեռքից, քանի որ անցել է առավել անմիտ հայտարարությունների:

Մինչ այս Ադրբեջանը հոխորտում էր, թե զենք կառնի ու «կլուծի» ղարաբաղյան հարցը, հիմա ԱԳՆ ղեկավար Էլմար Մամեդյարովը անցել է սպառնալիքի սպառնալիքին: Քանի կար՝ ասում էին, թե զորքը «դուրս բերեք», թե չէ հարձակվում ենք, հիմա էլ միայն այդ խոսքերը չասելու համար են հայտարարում, թե զորքը «դուրս բերեք»: Այնպիսի տպավորություն կարող է ստեղծվել, թե Ադրբեջանը ռազմատենչությանը վերջ տալու դիմաց ուզում է ստանալ այն, ինչ սպառնում էր «վերցնել զենքով»:

«Ռազմական հռետորիկան դադարեցնելու համար անհրաժեշտ է լուծել խնդիրները, որ ծնում են դրա կիրառումը», երեկ Բաքվում սլովակ գործընկերոջ հետ համատեղ ասուլիսում հայտարարել է Ադրբեջանի ԱԳ նախարար **Էլմար Մամեդյարովը**: Մամեդյարովի տրամաբանությամբ, այդ խնդիրներն են «օկուպացված տարածքներից հայկական զինուժի դուրսբերումը, այդ տարածքների ազատումը, փախստականների վերադարձը»:

Ադրբեջանի արտգործնախարարը նաեւ հայտարարել է, թե մադրիդյան սկզբունքները «նախատեսում են զինուժի դուրսբերումը Ադրբեջանի հինգ շրջաններից կամ «հինգ+»՝ նկատի ունենալով նաեւ Լաչինը»:

Հինգ շրջաններ «ազատելուն», ըստ Մամեդյարովի, պետք է իբր հետեւի Լաչինի, հետո էլ Քարվաճառի ազատումը, ընդ որում, արդեն իսկ պատրաստ են «այդ շրջանների վերականգնման նախագծերը», իսկ վերադարձողների անվտանգության ապահովման համար «նախատեսվում է միջազգային դիտորդների տեղակայում»:

Միայն այս ամենից հետո, Մամեդյարովի մեկնաբանությամբ, պիտի լուծվի Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցը՝ «Ադրբեջանի կազմում ամենաբարձր ինքնավարությամբ», Ադրբեջանի ԱԳ նախարարի խոսքերով, ասենք, Թաթարստանի եւ Բաշկիրիայի նման: Ադրբեջանը, ստացվում է, վերն ասվածով հանդերձ, սկզբունքորեն ընդունում է մադրիդյան սկզբունքները, ու մինչեւ հետագա քայլերի մասին հայտարարելը՝ սպասում է, թե ինչ կասի Հայաստանը մադրիդյան սկզբունքների նորացված տարբերակի առնչությամբ:

Իհարկե, Մամեդյարովի համար հրաշալի կլիներ, եթե ղարաբաղյան հակամարտության կարգավորման սցենարը հենց այսպիսին լիներ, սակայն այս դեպքում երազանքը կամ ցանկությունը ոչ մի աղերս չունեն իրականության հետ: Ի տարբերություն նույն Թաթարստանի կամ Բաշկիրիայի, Լեռնային Ղարաբաղն արդեն երկու տասնամյակ հանրապետություն է, անկախ ու ինքնիշխան, որի համար Ադրբեջանի կազմում հայտնվելու որեւէ սցենար կամ մոտեցում ֆանտաստիկայի ոլորտից է:

Նախորդ շաբաթ Երեւանում ՆԱՏՕ-ի խորհրդարանական վեհաժողովի անցկացրած «Ռոուզ Ռոթ» սեմինարի ընթացքում ԵԱՀԿ Մինսկի խմբի ֆրանսիացի համանախագահ **Բեռնար Ֆասիեն**, ըստ «Նովոստի Արմենիա» գործակալության, հայտարարել էր. «Պատերազմի վերսկսման դեպքում անհնար է, որ Ադրբեջանը հաղթի, քանի որ ես անձամբ եմ ծանոթ հայ եւ ղարաբաղցի մարտիկների խիզախությանը»:

Ավելին, ըստ Ֆասիեի, պատերազմն օգուտ չի բերի Ադրբեջանին, քանի որ էական վնաս կհասցնի վերջինի ֆինանսական շահերին, նավթի առեւտրին: Ֆրանսիացի համանախագահի կարծիքով, Ադրբեջանի ռազմատենչ հայտարարությունները ցուցադրական բնույթ ունեն:

Այս առնչությամբ Էլմար Մամեդյարովը նշել է, որ ծրագրում է հանդիպել Բեռնար Ֆասիեի հետ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների տարածաշրջանային այցի ընթացքում: Ըստ Ռուսաստանի ԱԳՆ ներկայացուցիչ Անդրեյ Նեստերենկոյի, համանախագահները տարածաշրջան կայցելեն մարտի վերջին, կլինեն Երեւանում եւ Բաքվում:

Իսկ մինչ այդ, ինչպես արդեն տեղեկացրել է «**Ազգը**», Էլմար Մամեդյարովի՝ համանախագահների հետ հանդիպումից հետո, այսօր, ըստ նախնական հայտարարության, Փարիզում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների հետ կհանդիպի նաեւ Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը:

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Պատրիարք Կիրիլը Հայաստանում

*1-ին էջից*

Մեծ է Կիրիլի դերը ռուս եկեղեցու վերամիավորման գործում, երբ Մոսկվայի պատրիարքարանին ենթարկվեց նաեւ արտասահմանյան թեւը: Այդ ջանքերում, անշուշտ, գլխավոր գործող անձը երկրի անառարկելի լիդերն էր՝ Վլադիմիր Պուտինը: Սակայն արդեն այն ժամանակ դրվում էր կրոնական-քաղաքական համագործակցության նոր հիմք, որը լայն զարգացում ստացավ նորընտիր պատրիարքի օրոք: Բարեհաճ հարաբերություններ հաստատելով Կրեմլի հետ, պատրիարք Կիրիլը, այդուհանդերձ, պարզորոշ զգալ է տալիս, որ ինքը կարող է լինել միայն գործընկեր, բայց ոչ կլիենտ: Եվ Կրեմլը պատասխանում է փոխադարձությամբ, փորձելով հենվել եկեղեցու վրա՝ Արեւմուտքից, նրա սեկուլյարիզմից եւ լիբերալ աշխարհայացքի կոչուն գաղափարներից տարանջատվելու համար:

Կիրիլը ներեկեղեցական բարեփոխումների հետ մեկտեղ, որպես ուղղափառության գլխավոր ու ակտիվ գաղափարախոս, հրապարակեց ուղենիշային փաստաթղթեր, որոնցում տրվում են Ռուս եկեղեցու ըմբռնումներն առհասարակ արդիականության սկզբունքային խնդիրներում՝ կրոն, պետություն, հասարակություն, բարոյականություն, մարդու իրավունքներ, էկոնոմիկա եւ այլն: Իրեն բնորոշ համառությամբ նա գործունեություն ծավալեց մի շարք ուղղություններով: Ընդ որում պետք է հասկանալ, որ, ասենք, ի տարբերություն Հայաստանի, շատ ավելի բարդ է արդյունքի հասնել Ռուսաստանի պես բազմազգ եւ բազմակրոն երկրում, երբ որոշակի քաղաքական ու էթնիկական խմբեր բացահայտ հանդես են գալիս Ռուս եկեղեցու ազդեցության մեծացման դեմ: Այդ ուժերն, օրինակ, անսեթեւեթորեն հակազդում էին հանրակրթական դպրոց թափանցելու Ռուս եկեղեցու մտադրություններին, քանզի նրանք քաջ գիտակցում էին, որ այդ մուտքը հզոր ազդակ կլինի ռուս ժողովրդի ինչ-որ տեղ կորսված ազգային ինքնագիտակցության զարթոնքի համար: Եվ Կիրիլի առաջին հաղթանակներից մեկը պետք է համարել այն, որ նախագահ Դմիտրի Մեդվեդեւը որոշում ընդունեց դպրոցներում կրոնական կուլտուրայի հիմունքների դասավանդման մասին: Երկրի զինված ուժերը եւս իրենց «շարքերն» ընդունեցին եկեղեցու ներկայացուցիչներին:

Սակայն Կիրիլին չի կարելի սահմանափակել հոգեւոր-ազգային կյանքի շրջանակներով, ինչքան էլ դա լինի նրա գլխավոր առաքելությունը: Նա համաքրիստոնեական մասշտաբի անհատականություն է, խորապես մտահոգված այն խնդրով, որ, ինչպես ինքն է ասում, քրիստոնեությունը չդառնա թանգարանային: Կիրիլը չի խուսափում ոչ մի լսարանից՝ կրոնական թե աշխարհիկ, իր երկրում թե արտասահմանում, ակտիվ երկխոսության մեջ է մտնում տարբեր կրոնների ներկայացուցիչների հետ եւ քննարկում արդի աստվածաբանության զարգացման հարցերը: Նրան խիստ անհանգստացնում է, որ քրիստոնեական աստվածաբանությունը, հատկապես բողոքական ու կաթոլիկ, դարձել է աշխարհիկ մտքի գերին, սպասարկում է նրան: Լիբերալ փիլիսոփայության մեջ սկսել է բացակայել «մեղք» հասկացությունը: Արդի արեւմտյան հասարակության մեջ ծայրահեղ անհատապաշտության գերիշխանության պայմաններում կրոնը հաճախ վերագրվում է բացառապես մասնավոր կյանքի ոլորտին կամ սոսկ կատարում է ծիսակատարային գործառույթներ: Համատարած ճգնաժամ է ապրում ընտանիքի ավանդական ինստիտուտը, ինչն էլ ժողովրդագրական, բարոյական աղետների առջեւ է կանգնեցնում քրիստոնեական քաղաքակրթությունը: Եվ այդ հենքի վրա առայժմ դժվար է հուսալ որեւէ մերձեցում Ռուս ուղղափառ եկեղեցու եւ Վատիկանի միջեւ: Հավանական է, որ կհաստատվեն սոսկ պրագմատիկ հարաբերություններ:

Վերջում կուզենայի հիշյալ հարցազրույցից մեջբերել Կիրիլի խոսքերը՝ ուղղված Հայ եկեղեցուն.

- Հարյուրամյակների ընթացքում Ռուս ուղղափառ եւ Հայ առաքելական եկեղեցիների հարաբերություններն աչքի են ընկել անխախտ ջերմությամբ ու փոխադարձ հարգանքով: Դրան նպաստել են մեկ պետության մեջ ունեցած մեր ժողովուրդների համատեղ կյանքի փորձը, Ռուսաստանի քաղաքներում հայ ազգային համայնքների ձեւավորումը, վառ եւ ինքնատիպ հայ մտավորականության ի հայտ գալը, որի ավանդը մեր հայրենիքի մշակութային զարգացման մեջ խիստ շոշափելի է եղել: Մեր ժողովուրդները եւ եկեղեցիները վերջին երեք դարում ավելի են մերձեցել, շատ բան են իմացել միմյանց մասին, ավելի լավ են սկսել հասկանալ միմյանց: Ուրախությամբ կարելի է արձանագրել, որ սկզբունքորեն կարեւոր հարցերում մեր եկեղեցիների տեսակետները մերձիմոտ են, եւ մենք տրամադրված ենք խորությամբ շարունակելու մեր երկխոսությունն ու համագործակցությունը:

ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏ

# Հայաստանը ՀԱՊԿ շրջանակում բավական ակտիվ է գործում

**ՀԱՊԿ շրջանակում նախատեսված միջոցառումների իրականացումը համակարգող միջգերատեսչական հանձնաժողովը մարտի 15-ին գումարել է հերթական նիստը, որը վարել է Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Արթուր Բաղդասարյանը:**

**Ամփոփելով 2009 թվականին ՀԱՊԿ շրջանակում Հայաստանի գործունեությունը՝ Արթուր Բաղդասարյանը նշել է, որ Հայաստանը ՀԱՊԿ շրջանակում բավական ակտիվ է գործել, արձանագրվել են մի շարք ձեռքբերումներ, եւ այդ մասին հայտարարել է նաեւ ՀԱՊԿ գլխավոր քարտուղարը: ՀԱՊԿ-ում Հայաստանի նախագահության ընթացքում ստեղծվել են ՀԱՊԿ արագ արձագանքման ստորաբաժանումները, Ղազախստանում կայացել են առաջին զորավարժությունները, որոնց մասնակցել են նաեւ Հայաստանի պաշտպանության նախարարության համապատասխան ստորաբաժանումները:**



**Անվտանգության խորհրդի քարտուղարը կարեւորել է շուրջ 10 տարի քննարկվող հարցի լուծումը՝ քաղաքական որոշման արդյունքում այսուհետեւ ՀԱՊԿ անդամ երկրներից որեւէ մեկի դեմ ագրեսիան ընդունվում է որպես ՀԱՊԿ-ի դեմ ագրեսիա: Սա Հայաստանի անվտանգության ապահովման առումով բացառիկ կարեւոր նշանակություն ունի, ուստի անհրաժեշտ է շարունակել ջանքերը նորմատիվ-իրավական բազան կատարելագործելու եւ ՀԱՊԿ շրջանակում ռազմաքաղաքական համագործակցությունն ակտիվացնելու ուղղությամբ:**

**Երրորդ կարեւոր ձեռքբերումը տեղեկատվական անվտանգության միասնական համակարգի ձեւավորումն է ՀԱՊԿ շրջանակում: Տեղեկատվական անվտանգության ոլորտում իրականացվում են «Պրոքսի» կոչվող հատուկ միջոցառումները, արձանագրվում են լավ արդյունքներ:**

**Արթուր Բաղդասարյանը նաեւ մատնանշել է 2010 թվականի գլխավոր խնդիրները՝ ռազմատեխնիկական եւ ռազմաարդյունաբերական համագործակցության ակտիվացում ՀԱՊԿ անդամ երկրների միջեւ, ակտիվ մասնակցություն «Կանալ», «Նելեգալ», «Պրոքսի» միջոցառումներին:**

**Նիստի ընթացքում պաշտպանության, արտաքին գործերի, արտակարգ իրավիճակների նախարարությունների, ոստիկանության եւ ազգային անվտանգության ծառայության ներկայացուցիչները հաղորդում են ներկայացրել 2009 թվականին ՀԱՊԿ շրջանակում իրականացված աշխատանքների մասին:**

*ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՄԱՄՈՒԼԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ*

# Անկարան երաշխիքներ է պահանջում Վաշինգտոնից

*1-ին էջից*

**Ահա թե ինչ է գրում թուրքական թերթը. «Ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովում Հայոց ցեղասպանության բանաձեւի ընդունմամբ սկզբնավորված իրադարձությունների շարանը «լուրջ» համարվող ճգնաժամի շեմին է կանգնեցրել թուրք-ամերիկյան հարաբերությունները: Այդ ճգնաժամին մեկնարկ տվեց ԱՄՆ-ում Թուրքիայի դեսպան Նամըք Թանի հետկանչը, իսկ վարչապետ Էրդողանի՝ Վաշինգտոնին հասցեագրած «հստակ դիրքորոշում» ցուցաբերելու պահանջով դա վերածեց դիվանագիտական շախմատի: Երկկողմ հարաբերությունների վերականգնման համար Անկարան Վաշինգտոնից «զույգ երաշխիքներ» է պահանջում:**

**Վերջին օրերին թուրքական կառավարությունը պաշտոնական եւ ոչ պաշտոնական խողովակներով Վաշինգտոնից երաշխիքներ է պահանջում, որ ցեղասպանության բանաձեւը քննարկման չդրվի Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի լիագումար նիստում եւ նախագահ Օբաման ապրիլի 24-ի ամենամյա ուղերձում չարտասանի «ցեղասպանություն» բառը: Սակայն Օբամայի վարչակարգն ու ԱՄՆ պետքարտուղարությունը, պատճառաբանելով, թե «չեն կարող Կոնգրեսի անունից պարտավորություններ ստանձնել», խուսափում են Անկարային գրավոր կամ բանավոր երաշխիքներ տալուց: Թեեւ չի ենթադրվում, որ հանձնաժողովում ընդամենը մեկ ձայնի առավելությամբ ընդունված բանաձեւը ներկայացվի Ներկայացուցիչների պալատի լիագումար նիստին, սակայն ԱՄՆ Կոնգրեսն ունի «ազգային կամքն» արտացոլող մարմնի համարում, ուստի Վաշինգտոնը դժվարանում է որեւէ կերպ պարտավորվել:**

**Նույն դժվարության առջեւ է կանգնած նաեւ ԱՄՆ պետքարտուղարությունն Օբամայի ապրիլի 24-ի ուղերձի հարցում, որը նախքան նախագահ ընտրվելը «ցեղասպանություն» բառն արտասանել էր եւ Թուրքիայի ազգային մեծ ժողովում ունեցած ելույթով հասկացրել էր, որ ինքն իբրեւ ցեղասպանություն է որակում 1915-ի իրադարձությունները, ուստի հրաժարվում է ուղերձի առումով որեւէ երաշխիք տալ Անկարային: Թեեւ ենթադրվում է, որ անցյալ տարի 1915-ի իրադարձությունները հայերենով «Մեծ եղեռն» բնութագրած Օբաման այս տարի եւս կխուսափի ցեղասպանություն բառի օգտագործումից, այնուամենայնիվ, Անկարան գրավոր կամ բանավոր երաշխիքի պահանջով ծանր կացության մեջ է դրել ինչպես Սպիտակ տանը, այնպես էլ պետքարտուղարությանը»:**

**Վերջում «Միլլիեթը» գրում է, որ Վաշինգտոն մեկնելու դեպքում վարչապետ Էրդողանը ոտքի վրա ոչ պաշտոնական հանդիպում կունենա նախագահ Օբամայի հետ, շուրջ 5-10 րոպե տեւող այս հանդիպումները երբեմն ձգվում են մինչեւ 45 րոպե, ամերիկյան կողմը հավանական է համարել Օբամա-Էրդողան հանդիպումը, իսկ թուրքականը՝ հաստատել:**

AZG NEW PDF.qxd 15/03/2010 22:06 Page 1



# Անդրադարձ

## Հայ-թուրքական սահմանի մոտ սահմանի բացմանը չեն հավատում

Մայրաքաղաքից ընդամենը 2 ժամվա հեռավորության վրա, հայ-թուրքական սահմանի հարեւանությամբ է Երվանդաշատ գյուղը: Երվանդյանների արքայական հարստության կառուցած Երվանդաշատ մայրաքաղաքի եւ Ախուրյանի ու Արաքսի խառնարանի վայրում է գտնվում գյուղը: Երբեմնի արքայանիստ քաղաքի տեղանքում ապրելու հանգամանքը գյուղացիների անսպառ հպարտության աղբյուրն է: 814 բնակիչ ունեցող գյուղում բոլորը միմյանց լավ են ճանաչում եւ անծանոթ մարդուն միանգամից նկատում են: Իսկ երբ հետաքրքրվեք գյուղի պատմությամբ, ապա ամենայն մանրամասնությամբ կներկայացնեն գյուղի արքայական անցյալը: «Մենք էստեղ մի քանի հազար տարի ենք ապրում», ասում են գյուղացիները:

Գյուղում Թուրքիային ամենամոտ հայկական տունը սահմանից 300 մետր է հեռու: Գյուղի կենտրոնում երբեմն լսելի է մինարեթներից հնչող ազանի ձայնը: Սահմանապահների հարեւանությամբ ապրող եւ սահմանային փշալարերի տեսքին սովոր գյուղացիները հայ-թուրքական սահմանի բացման նախաձեռնություններին զգուշավորությամբ եւ կասկածանքով են մոտենում: Տնտեսական փոփոխություններին գյուղում սպասում են, բայց ոչ հայ-թուրքական սահմանի բացման գնով: **Վազիր Ալոյանը**, ում ծիրանի այգիները սահմանի երկայնքով են աճում, սահմանի բացման ակնկալիքն ու ցանկությունը չունի: «Ես մեր պատմությունը չեմ մոռացել: Թուրքերի հետ ընկերություն չեմ ուզում անել: Տարիներ շարունակ էսպես ապրել ենք, էլի կապրենք», ասաց Վազիր Ալոյանը: 60-ամյա **Լուսյա Ջուլհակյանը** Երվանդաշատում է ծնվել: 6 աղջիկներից 5-ն ամուսնացել են, կրտսերն էլ սովորում է Արմավիրում: Ամուսնու հետ ապրող կինը, ում եկամուտի միակ աղբյուրը տան առջեւ գտնվող այգին է եւ թոշակը, սահմանի բացումից խուսափում է: «Թուրքի հետ ընկերություն անել չի լինի: Շանը մոտեցի, բայց փայտը ձեռքիցդ բաց մի թող: Թող սահմանները պահեն, էսպես ավելի լավ է», ասաց Լուսյա Ջուլհակյանը:

Գյուղացիների այգիների ու դաշտերի մեծ մասը գտնվում է չեզոք գոտում: Դրանք սահմանին հարակից հատվածներն են, ուր գյուղացիները մուտք գործելու եւ դաշտերը մշակելու համար սահմանապահներից թույլտվություն եւ անցաթուղթ են ձեռք բերում: Եվ թեպետ ամեն օր եւ ամեն անգամ սեփական այգիները մտնելու համար պետք է սահմանապահների թույլտվությունն ունենան, գյուղացիները զգուշանում են սահմանի բացումից:

26 թոռան եւ 14 ծոռան ծնունդն է տեսել 80-ամյա **Հրանտ Աբրահամյանը**: Ասում է, որ ծնվել է մայիսի 28-ին, առաջին որդին էլ՝ ապրիլի 24-ին: Իր գյուղի հող ու ջրին կապված Հրանտ Աբրահամյանը սահմանի բացման հետ մեծ հույսեր չի կապում: «Միշտ էսպես փակ ու փշալարերով քաշված սահմաններ չենք կարող ունենալ: Բայց թուրքը շատ վտանգավոր ու նենգ է: Պետք է զգույշ լինել», ասաց Հրանտ Աբրահամյանը:

Երբեմնի Հայքի մայրաքաղաք Երվանդաշատից ներկայիս մայրաքաղաք Երեւան հասնելու համար գյուղացիները պետք է գնան Արմավիր, որից հետո՝ նոր միայն Երեւան: Իսկ Արմավիր օրվա մեջ միայն մեկ անգամ «գազել» է գնում: Սահմանի բացման դեպքում գյուղը կդառնա հանրապետության աշխույժ կետերից մեկը, այս հեռանկարը, սակայն, երվանդաշատցիներին հեռավոր եւ դեռեւս անիրականանալի է թվում:

ԱՐԵՎԻԿ ԲԱԴԱԼՅԱՆ

## Թուրք գործարարը մտադրվել է Հայաստանում զբաղվել կոշիկի արտադրությամբ

Թուրք գործարար **Աքթայ Բիլենն** արդեն 15 տարի զբաղվում է կոշիկի արտադրությամբ: Ստամբուլում կոշիկի արտադրության փոքրիկ ֆիրմա ունի: Սկզբում կարում էին կոշիկր միայն տղամարդկանց համար: Արդեն 4 տարի կոշիկներ են կարում նաեւ գեղեցիկ սեռի ներկայացուցիչների համար: Իր խոսքերով՝ թեպետ ֆիրման փոքրիկ է, կարողանում է դիմանալ մրցակցությանը. արդեն անուն է ձեռք բերել, ունի մշտական հաճախորդներ:

**Օքթայ Օնուրն** էլ զբաղվում է առեւտրային բիզնեսով, մայրաքաղաքում առեւտրի կետրոններ ունի:

Թուրք գործարարներն արդեն մեկ շաբաթ Հայաստանում են: Ասում են՝ այցը ճանաչողական է: Հայաստան այցելությանը նպաստել են հայ-թուրքական սահմանի բացման եւ երկու երկրների միջեւ հարաբերությունների հաստատման վերաբերյալ խոսակցությունները: Բիլերը նկատում է, որ սահմանի բացումը կբերի տնտեսական զարգացում, նոր ծրագրեր, հետեւաբար գործարարները պետք է պատրաստ լինեն ճիշտ ժամանակին ճիշտ բնագավառում ներդրումներ կատարելու:

«Հենց տնտեսական համատեղ ծրագրերի, ներդրումների շնորհիվ կամրապնդվեն երկու երկրների նորաստեղծ հարաբերությունները: Այս հարցում կարեւոր դերակատարություն պետք է ունենան հատկապես գործարարները: Պետք է ծանոթանալ շուկային, գներին, մթնոլորտին, պայմաններին: Լավ գործարարը պետք է նախապատրաստվի, ուսումնասիրի մինչ որեւէ ներդրում կատարելը», «**Ազգի**» հետ զրույցում ասում է նա:

Օնուրը նկատում է, որ երկու երկրները տնտեսական ասպարեզում միշտ համագործակցել են: «Սահմանը միշտ բաց է եղել, դրա ապացույցը Ստամբուլում բազմաթիվ հայերի ներկայությունն է, որոնք աշխատում են տարբեր ոլորտներում, պարզապես հիմա այդ ամենը կիրականացվի ավելի կարճ ու էժան ճանապարհով», ասում է նա:

Գործարարները նկատում են, որ Հայաստանի մասին գրեթե տեղյակ չէին ու մեկ շաբաթվա ընթացքում հասցրել են կարծիքները փոխել:

«Պետք է խոստովանեմ, որ որոշ առումներով դուք մեզ զարմացրիք: Մինչ այցելությունն այն տպավորությունն էր, որ ապրում եք չզարգացած մի երկրում, որտեղ տարրական պայմաններ չկան, ու զարմացանք, երբ Երեւանում տեսանք այսքան շատ խանութներ, սրճարաններ, նորակառույց շենքեր: Իհարկե, հասկանալի է, դրանք բոլորի համար չեն ու ծառայում են միայն մի փոքր խավի համար, բայց դա նշանակում է, որ բիզնեսը զարգանում է: Դա լավ է, որովհետեւ կլինեն երկկողմանի ներդրումներ, որից օգուտ կքաղեն հասարակությունները», ասում է Օնուրը:

Բիլերը մտադրվել է սահմանի բացման պարագայում Հայաստան բերել կոշիկների մի փոքրիկ հավաքածու: «Այս ամենը հեռակա պլաններ են, դեռ պետք է պայմանավորվել որեւէ խանութի հետ, բայց եթե հարաբերություններ հաստատվեն Հայաստանը լավ շուկա կդառնա: Չկարծեք՝ մեծամտություն է, պարզապես ձեզ մոտ գները շատ թանկ են: Հագուստի, կոշիկի, պայուսակի համար դուք շատ թանկ եք վճարում, մեզ մոտ այդպես չէ, իհարկե, կան թանկարժեք խանութներ, բայց կան բազմաթիվ որակյալ խանութներ, որոնք նախատեսված են միջին խավի համար: Մի քանի խանութներում հետաքրքրվեցի, հայկական արտադրության կոշիկները շատ թանկ են, հասարակության մեծ մասն ի վիճակի չէ գնել, ի տարբերություն մեր արտադրանքի, որ չափազանց էժան ու որակյալ է»:

Օքթայ Օնուրը շրջել է մի շարք սուպերմարկետներում: Կարծիքը հետեւյալն է՝ գեղեցիկ են, առատ, ճաշակով կահավորված, բայց կա մի թերություն, որին Թուրքիայում մեծ ուշադրություն են դարձնում: «Ես միշտ իմ ենթականերին ասում եմ, որ հաճախորդի հետ պետք է լինել սիրալիր, բարեհամբույր, դիմավորել եւ ճանապարհել ժպիտով, այդ ժամանակ հաճախորդը երկրորդ անգամ էլ կայցելի մեր սուպերմարկետ: Բայց ձեզ մոտ չտեսա սիրալիր սպասարկում, ձեր աղջիկները կարծես չեն կարողանում ժպտալ», ասում է նա:

Բիլերը վստահ չէ, որ սահմանի բացմամբ հասարակությունների միջեւ երկխոսությունն այդքան շուտ կսկսվի: Գործարարը գիտե պարզ ճշմարտություն. մեր հասարակությունները միմյանց չեն հանդուրժում: Ըստ նրա՝ այս հարցում էլ գործարարները կարող են մեծ ներդրում ունենալ: «Միանգամից երկխոսություն չի սկսվի, բայց եթե գործարարներն այստեղ ներդրումներ կատարեն, բիզնես ծավալեն, կարողանան համագործակցել, ապա դա կնպաստի նաեւ հասարակությունների միջեւ եղած սառույցի հալվելուն»:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

## Հայկական կոնյակը մրցունակ է «հայկականությամբ»

### *ԵԿԳ Բերդի մասնաճյուղը շուտով հնացման արտադրամաս էլ կունենա, առայժմ նոր է թորմանը*

Արվելու է ամեն ինչ, որ մի ճութ խաղող իսկ չմնա գետնին, ու աճեցվածը իրացվի: Երեւանի կոնյակի գործարանի գործադիր տնօրեն **Արա Գրիգորյանի** այս հայտարարությունը ԵԿԳ Բերդի (Տավուշի մարզ, նախկին Շամշադին) մասնաճյուղում թորման արտադրամասի բացման համատեքստում էր, որ տեղի ունեցավ ուրբաթ օրը, Տավուշի մարզպետ Արմեն Ղուլարյանի, Բերդի քաղաքապետ Անդրանիկ Շառյանի, ԵԿԳ արտադրության տնօրեն Ֆիլիպ Թիբոյի մասնակցությամբ:

Նախկինում Բերդի մասնաճյուղում միայն խաղող էր մթերվում, իսկ գինենյութը՝ տեղափոխվում: Գինենյութի թորման աշխատանքներն արտադրամասում մեկնարկել են 2009-ի նոյեմբերի 2-ից, ս. թ. մարտի 10-ի դրությամբ արդեն թորվել է 1 մլն լիտր գինենյութ: Դրանից ստացվել է 155 000 լիտր կոնյակի սպիրտ, որ, մասնագետների կանխատեսումներով, հետագայում կօգտագործվի պրեմիում եւ սուպերպրեմիում դասի կոնյակների արտադրության համար:

2008 թվականին ԵԿԳ-ն մարզում մթերել է 2100 տ խաղող, իսկ 2009 թվականին, չնայած համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի բացասական ազդեցությանը, հետեւել է իր պլանային ծրագրին եւ մթերել ավելի քան 2800 տ խաղող մեկ կգ-ի դիմաց վճարելով 120 դրամ:

Բերդի մասնաճյուղում արդեն իսկ գործում են Ֆրանսիայից ներմուծված թորման երեք կաթսաներ (որոնցից մեկի արտադրելու գործընթաց է սկսել կազմակերպել Երեւանի կոնյակի գործարանը), որոնք, ըստ Արա Գրիգորյանի, շուտով կհամալրվեն եւս երեքով՝ հնարավորություն ստեղծելով



*Գործարանի տնօրենությունը Բերդի արտադրամասում*

տեղում թորելու Տավուշի մարզում մթերված ողջ խաղողը: Ավելին, հաշվի առնելով Հայաստանի սահմանամերձ շրջաններում արդյունաբերության զարգացման կարեւորությունը, ԵԿԳ-ն նախատեսում է Բերդում ընդլայնել իր արտադրական կարողությունները, հիմնելով նաեւ հնացման արտադրամաս:

Արտադրամասում արդեն իսկ 16 մարդ է աշխատում, նախատեսվող ծրագրերի իրականացման պարագայում այդ թիվն ամենայն հավանականությամբ կաճի եւս 10-ով, ինչը տարածաշրջանի կտրվածքով էական ցուցանիշ է, քանի որ դրան կարելի է գումարել նաեւ հետագայում խաղողը հենց ԵԿԳ-ին մթերման հանձնելու պայմանագրերով որոշակիություն ձեռք բերող խաղողագործներին:

Գրիգորյանի ներկայացմամբ, ԵԿԳ-ն, նկատի առնելով Տավուշի մարզի սահմանամերձ լինելը, ունի ընդգծված մոտեցում. խաղողն այստեղ ապրուստի կարեւոր միջոցներից է: Մարզում խաղողագործությամբ զբաղվող մոտ 5500 տնտեսությունների մի զգալի մասի հետ ԵԿԳ-ն շուտով կկնքի պայմանագրային աշխատանքները:

Չնայած նախորդ տարի գլոբալ ֆինանսական ճգնաժամի պատճառով գործարանը արտադրության անկում է ունեցել նշանակալի չափով, Արա Գրիգորյանն ընդգծեց, որ այս տարի գոնե առկա իրավիճակը պահպանելը գերխնդիր է, իսկ 2007-2008թթ. լավագույն տարվա ցուցանիշներին ծրագրում են հասնել 2012-ին:

Մարզպետ **Արմեն Ղուլարյանն**, իր հերթին, կարեւորեց արտադրամասի գործունեությունը մարզի համար, ընդգծելով, որ նախորդ տարի մթերված մոտ 6000 տոննա խաղողի կեսը գինեհյութ է դարձել ԵԿԳ-ի Բերդի արտադրամասում, ընդ որում, մթերման դիմաց խաղողագործներին վճարվել է մյուս մթերողների համեմատ ամենաբարձր գինը: Ընդհանուր առմամբ, Տավուշի մարզում 2009-ին արտադրվել է մոտ 11000 տոննա խաղող, որից մթերվել է մոտ 6000-ը, քանի որ մնացյալը գյուղացին նախընտրում է վաճառել շուկայում կամ սեփական գինին պատրաստել:

Պայմանագրով խաղողի մթերում իրականացնելն էլ, Ղուլարյանի հավաստմամբ, տարածաշրջանի համար կայուն եկամուտ ունենալու հնարավորություն է, ինչով էլ հաստատապես կարելի է վճարել տարբեր վճարներն ու հարկերը: Պայմանագրային մոտեցումն ու ընդհանրապես մարզում խաղողագործության հանդեպ հետաքրքրությունն են նաեւ, ըստ մարզպետի, պայմանավորում, որ վերջին տարիներին մարդիկ վերադառնում են իրենց հայրենի վայրեր, սկսում մշակել խաղողի խոպան մնացած այգիները:

ԵԿԳ-ի արտադրության տնօրեն **Ֆիլիպ Թիբոն** ներկայացրեց, որ հայկական եւ ֆրանսիական կոնյակների արտադրության մեթոդները բավականին մոտ են, բայց հայկական կոնյակի յուրահատկությունը գալիս է տեղական խաղողի սորտից, հողից, կլիմայից: Իսկական հայկական կոնյակն, ըստ ֆրանսիացի մասնագետի, ունի ընդգծված անհատականություն, որով էլ տարբերվում է մյուս կոնյակներից: Թիբոն վստահեցրեց, որ Հայաստանում արտադրված կոնյակը կարող է հաղթող լինել, եթե պահպանի հենց հայկական կոնյակին բնորոշ առանձնահատկությունները:

Անդրադառնալով վերջերս Հայ գինեգործների միության բարձրացրած մտահոգությանը, որը վերաբերում է Էջմիածնի Գայ գյուղի 4-5 հա այգիներում ի հայտ եկած խաղողի վազի համար ժանտախտ հիշեցնող ֆիլոքսերա միջատի ավերիչ ազդեցությանը, ԵԿԳ-ի գործադիր տնօրեն Արա Գրիգորյանը նշեց, թե, իր գնահատականով, դրությունը դեռեւս կրիտիկական չէ, բայց պետք է հարցին հնարավորինս արագ լուծում տրվի: Ֆիլիպ Թիբոն էլ նախ տեղեկացրեց, որ այս խնդիրն առկա է գրեթե ողջ աշխարհում եւ լուծվում է հին վազերի հեռացմամբ ու նորերը տնկելով: Եթե չպայքարեն մի քանի հեկտար հողատարածքում խաղողի այս «ժանտախտի» դեմ, ապա հնարավոր է, որ մոտ 5 տարում Արարատյան դաշտում առողջ վազ չմնա:

Լարսը՝ բաց, թե փակ, կոնյակին չի առնչվում:

ԵԿԳ-ի գործադիր տնօրեն Արա Գրիգորյանը Բերդում անդրադարձավ նաեւ Ռուսաստան-Վրաստան ցամաքային Վերին Լարսի հսկիչ անցագրային կետի բացմանը, ընդգծելով, որ կոնյակը Ռուսաստան է արտահանվում Երեւան-Փոթի, ապա լաստանավով Նովոռոսիյսկ ճանապարհով, քանի որ այս անցակետն է ընդունում ակցիզային հարկման ենթակա խմիչքները: Ուստի Վերին Լարսի բաց լինելը ողջունելով հանդերձ՝ Գրիգորյանը հավաստիացրեց, որ այդ հանգամանքը կոնյակի գործարանին չի առնչվում:

Ինչ վերաբերում է հայ-թուրքական սահմանի բացմանն ու դրան հետեւելիք իրավիճակի կանխատեսումներին, ապա այդտիպիք Գրիգորյանը չարեց, միայն կարեւորելով, որ սահմանները, այնուամենայնիվ, պետք է բաց լինեն:

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱԶԳ **Միջազգային**

# Սաակաշվիլու «սպանությունը»՝ վրաց իշխանությունների շոկային թերապիա՞

Շաբաթ երեկոյան Թբիլիսիում իրարանցում էր, խուճապ: Առաջին իսկ հարցը պարզ դարձրեց, որ էլի Վրաստանում հերթական յուրօրինակության հեղինակը հեռուստատեսությունն է, որի էկրաններին գամված նորությունների էին սպասում շատերը, երբ «Իմեդի» հեռուստաընկերության եթերով արդեն լրատվական բլոկով հայտարարել էին, թե Ռուսաստանը հարձակվել է Վրաստանի վրա, ու սպանվել է նախագահ Միխեիլ Սաակաշվիլին:

Թբիլիսիի հյուրանոցներից մեկում ողջ անձնակազմի՝ հեռուստաէկրանին գամված հայացքներից կարելի էր հասկանալ, որ շատերն ամենայն լրջությամբ էին ընդունել տարածված լուրը, մինչդեռ «Իմեդին» լուրերը հեռարձակելուց հետո մի թեթեւ նշել էր, որ լրատվական հաղորդումը եթեր է հեռարձակելու իրադարձությունների հնարավոր զարգացման սցենարով լուրեր:

«Իմեդին» նախ հայտարարել էր, թե ռուսական զորքը մտել է Վրաստան Հարավային Օսիայի տարածքով, ապա ավելացրել, թե սպանվել է Սաակաշվիլին: Հեռուստաընկերության աշխատակիցների երեւակայությունը բավականին հեռու էր գնացել. երկրի նախագահի սպանության լուրին հաջորդել էր հաղորդագրություն, թե խուճապի մեջ են Վրաստանի խոշոր քաղաքները, մարդիկ զանգվածաբար լքում են Թբիլիսին: Օդանավակայանների ու նավահանգիստների ռմբակոծման մասին հայտարարելուց հետո միայն «Իմեդին» նշել էր, թե ասվածն իրադարձությունների հնարավոր զարգացման մասին ռեպորտաժ էր:

Առողջ տրամաբանությունը հուշում էր, որ եթե երկրում նման իրավիճակ է, ուրեմն մյուս հեռուստաընկերությունների եթերում էլ պիտի գրեթե նույնը հաղորդվեր: Սակայն այս դիտարկումներին բոլորը չէ, որ համաձայնում էին: Ամեն դեպքում, Թբիլիսիում գոնե իրարանցումը շատ զգալի էր:

Թե ինչի՞ն էր ծառայում «Իմեդիի» նման հաղորդումը, դժվար է տրամաբանել, հատկապես որ որեւէ կերպ բնակչությանը նախապես չէր բացատրվել, թե դա իսկապես հնարովի իրադարձությունների ռեպորտաժ է: Ամեն դեպքում, հաղորդմանն անմիջապես հետեւեցին տարբեր տեսակի մեկնաբանություններն ու գնահատականները, հերքումներն ու մեղադրանքները տարբեր հեռուստաալիքներով:

Հեռուստաընկերության անհեթեթություն հիշեցնող պահվածքին սեփական արտառոցության բարձունքից է մոտեցել երկրի նախագահ Միխեիլ Սաակաշվիլին: Նախ նա հայտարարել էր, որ թեեւ Ռուսաստանի կողմից սադրանքները հավանական են, բայց ներկա դրությամբ հարձակման որեւէ վտանգ չկա: Սակայն որքան էլ երկրի նախագահը նման խոսքեր ասի, իրարանցումը Թբիլիսիում վկայում էր, որ մարդիկ հավանական են համարում Ռուսաստանի հարձակումը, ավելին, թեեւս վառ են հիշողությունները, երբ ռուսական տանկերը 2008-ի օգոստոսին քիչ մնաց հայտնվեին Թբիլիսիում:

Վրաստանի նախագահի՝ հեռուստաընկերության եթերից հետո հայտարարությունն էլի արտառոց մտքեր ունի: Մասնավորապես, Միխեիլ Սաակաշվիլին տեղի ունեցածն անգամ օգտակար է համարել այն դեպքում, երբ մարտի 14-ին ցույցի դուրս եկած քաղաքական ուժերի ներկայացուցիչները հայտարարում էին, որ «հարձակման» մասին ռեպորտաժը եթեր է տրվել առնվազն Սաակաշվիլու իմացությամբ: Եթե հաշվի առնենք, որ Վրաստանում հեռուստաեթերը, այդ թվում՝ ծայրահեղ ընդդիմադիր կեցվածքից կառավարամետ դարձած «Իմեդի» հեռուստաընկերությունը վերահսկվում են վրաց իշխանությունների կողմից, ապա կարելի է ենթադրել, որ շաբաթ օրվա եթեր տրված նյութից չէին կարող անտեղյակ լինել իշխանությունները:

Սաակաշվիլին ոչ միայն օգտակար է համարել կատարվածը, այլեւ, վրացական լրատվամիջոցների տեղեկացմամբ, եթեր հեռարձակված ռեպորտաժն այլ կերպ ներկայացնելու միտք առաջարկել: Սաակաշվիլին ամենայն մանրամասնությամբ քննարկել է հավանական սցենար ներկայացնող հաղորդումն ու արդեն բնակչությանն ուղղված խոսքում հայտարարել, թե «ֆիլմը» բավականին մոտ է եղել նրան, ինչ կարող էր տեղի ունենալ:

Ի տարբերություն նախագահի չեզոք, անգամ վերլուծող կեցվածքի, Վրաստանի տարբեր կառույցներ, քաղաքական ուժեր, կազմակերպություններ միանշանակ դատապարտել են տեղի ունեցածը: Զարմանք ու մտահոգություն են հայտնել նաեւ Վրաստանում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչություններից շատերը: Վրացական ընդդիմությունն էլ, ակնկալելի տարբերակով, տեղի ունեցածում մեղադրում է իշխանություններին:

Արդեն կիրակի օրը Թբիլիսիում հանգիստ էր, չնայած քննարկումները, թե ինչպես պետք է պատժել հեռուստաընկերությանը նման քայլի համար, դեռեւս շարունակվում էին:

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**
**Թբիլիսի-Երեւան**

# Ֆրանսիայի ընտրություններում սոցիալիստներն առջեւում են Օբրիի գլխավորությամբ

Ֆրանսիայում կիրակի օրն անցկացված մարզային ընտրություններում նախագահ Նիկոլա Սարկոզիի «Ժողովրդական շարժման միություն» կուսակցությունը ձախողում է կրել, առաջնությունը զիջելով իր գլխավոր մրցակցին՝ Սոցիալիստական կուսակցությանը: Չնայած ներկայիս պառակտվածությանը, սոցիալիստները Մարտին Օբրիի գլխավորությամբ ստացել են բոլոր քվեների 29,5 տոկոսը, Սարկոզիի կողմնակիցները՝ 26,2 տոկոս: «Լիբերասիոն» թերթի նախնական տվյալների համաձայն, հաջող արդյունքների են հասել նաեւ «կանաչները» (12,2 տոկոս) եւ ծայրահեղ աջ Ժան-Մարի Լը Պենի «Ազգային ճակատը» (11,7 տոկոս):




Սա Ֆրանսիայում անցկացված վերջին քվեարկությունն է 2012-ի նախագահական եւ խորհրդարանական ընտրություններից առաջ: Մարզային ընտրությունների 2-րդ փուլը տեղի կունենա մարտի 21-ին, երբ հայտնի կդառնա, թե որ քաղաքական ուժն է ղեկավարելու երկրի 26 մարզերը: Սակայն սոցիալիստների հաղթանակը եւ նախագահական կուսակցության պարտությունն արդեն կասկած չեն հարուցում:

Վերջերս Սարկոզիի կուսակցության վարկանիշը զգալիորեն իջել է տնտեսական ճգնաժամի հետեւանքների կապակցությամբ. Ֆրանսիայում գործազրկության մակարդակը հասել է 10 տոկոսի: Ընդդիմության օգտին քվեարկելով՝ ֆրանսիացիները «պատժում են» կառավարությանը:

Սոցիալիստական կուսակցության դիրքերը մարզերում ավանդաբար շատ ամուր են: Վերլուծաբանները կարծում են, որ նրանց կին առաջնորդ Մարտին Օբրին կարող է դաշնակից ընտրել «կանաչներին» եւ ներկայիս հաջողությունն օգտագործել 2012-ի ընտրություններում նախագահության թեկնածու առաջադրվելու համար:

# Ծովահեններին հանձնեցին Սոմալիլենդի իշխանություններին

Ռուսական ծովուժի ներկայացուցիչները չճանաչված Սոմալիլենդի հանրապետության իշխանություններին են հանձնել ավելի վաղ Ադենի ծոցում ձերբակալված 7 ծովահենների: Ֆրանսպրես գործակալության տվյալներով, նրանք ձերբակալվել էին մոտ երկու շաբաթ առաջ:

Տեղական ոստիկանության ներկայացուցիչ **Աբդուլլահի Ռագեն** գործակալության թղթակցին ասել է, որ քննության ավարտից հետո ծովահենները դատվելու են:

Ադենի ծոցում ռուսական ռազմանավերը պարեկություն են անում 2008-ի սեպտեմբերից: Ներկայումս այնտեղ է գտնվում Բալթյան նավատորմի «Նեուստրաշիմի» պարեկանավը: Մարտի սկզբին հաղորդվել էր, որ պարեկանավը կալանել է 7 ծովահենների, որոնք մտադրվել էին հարձակվել սովետական «Արիելլա» նավի վրա:

Չճանաչված Սոմալիլենդի հանրապետությունը Սոմալիի հյուսիս-արեւմուտքում գոյություն ունի 1991 թվականից, երբ երկրում տապալվեց բռնապետական վարչակարգը, եւ միասնական պետությունը դադարեց գոյություն ունենալուց: Միջազգային ընկերակցության կողմից ճանաչված Սոմալիի կառավարությունը վերահսկում է միայն մայրաքաղաք Մոգադիշոյի մի մասը, իսկ մնացած տարածաշրջանները ենթարկվում են տեղական կլաններին կամ իսլամիստական շարժումներին:

ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒԿԱ

# Զենքի արտահանման գծով Ռուսաստանը 2-րդ տեղում է

Սովորական սպառազինությունների եւ ռազմական սարքավորումների արտահանության գծով Ռուսաստանը 2005-2009 թթ. աշխարհում զբաղեցրել է 2-րդ տեղը: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրեսը, վկայակոչելով Ստոկհոլմի խաղաղության հետազոտական ինստիտուտի (SIPRI) մամլո տեղեկագիրը:

Շվեդիայի այդ հետազոտական ինստիտուտի տվյալներով, սովորական սպառազինությունների շուկայում Ռուսաստանի բաժինը կազմում է 24 տոկոս: Զենք արտահանողների մեջ առաջին տեղը զբաղեցնում է ԱՄՆ-ը, որին պատկանում է սպառազինության շուկայի 30 տոկոսը: Երրորդից հինգերորդ տեղերը համապատասխանաբար զբաղեցնում են Գերմանիան, Ֆրանսիան եւ Մեծ Բրիտանիան: Ինստիտուտի տեղեկությունների համաձայն, վերջին հինգ տարում սպառազինությունների միջազգային մատակարարումների ծավալներն աճել են 22 տոկոսով:

SIPRI-ն նշում է, որ ամերիկյան զինատեսակների արտահանության 39 տոկոսը կազմում է օդուժը: Ռուսական զինատեսակների արտահանության մեջ օդուժի բաժինը կազմում է 40 տոկոս:

Ավելի վաղ՝ 2001-2005 թվականներն ընդգրկող զեկուցագրում, SIPRI-ն Ռուսաստանը ճանաչել էր զինավաճառքի գծով համաշխարհային առաջատար: Այն ժամանակ Ռուսաստանի բաժինը սովորական սպառազինությունների շուկայում կազմել էր 31 տոկոս, ԱՄՆ-ի բաժինը՝ 30 տոկոս (2-րդ տեղ):

Ինստիտուտի փորձագետները նշում են, որ Մերձավոր Արեւելք, Հյուսիսային Աֆրիկա, Հարավային Ամերիկա, Հարավային եւ Հարավարեւելյան Ասիա առաքվող զենքի ծավալները վկայում են այս տարածաշրջաններում սպառազինությունների մրցավազքի ծավալման մասին: Այսպես, ամերիկյան զենքի արտահանումների 65 տոկոսը բաժին է ընկնում Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի եւ Մերձավոր Արեւելքի երկրներին:

# «Ալ Ղաիդայի» զորհայինն աշխատել է ԱՄՆ ատոմային 6 ձեռնարկությունում

Եմենում «Ալ Ղաիդայի» զորհայինների դեմ կազմակերպված շուրջկալի ժամանակ ձերբակալվել է ԱՄՆ քաղաքացի Շարիֆ Մոբլին, որն անցյալում հասցրել էր ԱՄՆ-ում աշխատել ատոմային ճյուղի 6 ձեռնարկությունում: Ասոշիեյթեդ պրես գործակալության տվյալներով, ներկայումս իշխանությունները փորձում են պարզել, թե Շարիֆ Մոբլին կարողացե՞լ է արդյոք հայթայթել գաղտնի տեղեկություններ:



26-ամյա Մոբլին ծագումով սոմալեցի է: Նա Եմենի մայրաքաղաք Սանայում մարտի սկզբներին ձերբակալվել է 10 ուրիշ կասկածյալների հետ: Եմենի իշխանությունները պնդում են, որ ձերբակալությունից հետո «Ալ Ղաիդայի» ամերիկացի զորհայինը պահանջել է իրեն տանել հիվանդանոց, որտեղ նա կարողացել է հափշտակել ատրճանակ եւ փախուստի անհաջող փորձ է կատարել, ընդսմին գնդակահարելով պահապաններից մեկին:

Քննիչները կարծում են, որ Նյու Ջերսիի բնակիչ Շարիֆ Մոբլին Եմեն էր մեկնել ահաբեկչական կազմակերպությանը հարելու նպատակով: Կասկածյալի ծնողները ժխտում են նրա մեղքը, սակայն ամերիկացի ծանոթներից մեկը հաստատում է, որ Շարիֆը դարձել է արմատական իսլամի հետեւորդ: Այդուհանդերձ Շարիֆն առայժմ չի մեղադրվում ատոմակայաններում ահաբեկչության նախապատրաստման մեջ:

2002-2006 թթ. Մոբլին աշխատել է կապալառու ընկերությունում, որն ատոմակայանների սպասարկմամբ էր զբաղվում Նյու Ջերսիի, Փենսիլվանիայի եւ Մերիլենդի նահանգներում: Անձամբ նա տեղափոխել է բեռներ եւ տեղակայել լաստակներ: Պետերի կողմից Մոբլիին ուղղված կշտամբանքներ չեն արձանագրվել: Ներկայումս ատոմակայանների տնօրենությունները ստուգումներ են անցկացնում ձեռնարկությունների այն տեղամասերում, որոնց հետ կապված է եղել Մոբլիի աշխատանքը:

# Օբաման «զայրացած է» Մեքսիկայում 2 ամերիկացիների սպանությունից

Մեքսիկացի Սյուդադ Խուարես քաղաքում անհայտ անձանց հրաձգության ժամանակ երեկ սպանվել են ԱՄՆ հյուպատոսարանի մի աշխատակցուհի, նրա ամերիկացի ամուսինը, ինչպես նաեւ մեկ ուրիշ աշխատակցուհու մեքսիկացի ամուսինը: Այդ մասին հաղորդում է BBC գործակալությունը:

ԱՄՆ ազգային անվտանգության խորհրդի ներկայացուցիչ Մայք Համմերը հատուկ հայտարարություն է արել, մասնավորապես նշելով, որ նախագահ Բարաք Օբաման «զայրացած եւ վրդովված է» ամերիկյան հյուպատոսության հետ կապված երեք անձանց «դաժան սպանության» կապակցությամբ:

Հայտարարության մեջ նաեւ ընդգծվել է, որ Վաշինգտոնը Մեքսիկոյի իշխանությունների հետ բոլոր ջանքերը կգործադրի մեղավորներին գտնելու եւ պատասխանատվության ենթարկելու համար: ԱՄՆ-ի պետդեպարտամենտը երկրի քաղաքացիներին հորդորել է չմեկնել Մեքսիկա:

Սյուդադ Խուարես քաղաքը Մեքսիկայի հյուսիսում է՝ ԱՄՆ-ի սահմանի մոտակայքում: Քաղաքը համարվում է թմրամաֆիայի փոխաբեռնման խոշորագույն կետերից մեկը, որտեղով կոկաին եւ մարիխուանա է տեղափոխվում Միացյալ Նահանգներ: Միայն անցյալ տարի թմրանյութերի հետ կապված հանցագործությունների հետեւանքով քաղաքում 2600 մարդ է սպանվել: Ամերիկացիները Սյուդադ Խուարեսը համարում են երեածին քաղաքների առաջատար:

Մեքսիկայում թմրաբարոնների պատերազմի ընթացքում 18600 մարդ է սպանվել 2006-ից ի վեր, երբ նախագահ Ֆելիպե Կալդերոնը բանակի օգնությամբ պայքար սկսեց թմրամաֆիայի դեմ: Զոհերի մեծ մասը հենց ելուզակներն են եւ ոստիկանության աշխատակիցները:

Երկրում բռնարարքների լայն տարածումը եւ տիրող անպատժելիությունը հարուցում են Մեքսիկայի հարեւանների եւ արտասահմանյան ներդնողների երկյուղները:

AZG NEW PDF.qxd 15/03/2010 22:05 Page 1



ԱԶԳ **75-ամյակ**

# Լեոնիդ Ենգիբարյան

«...Եվ մոր համար էլ այդ երջանիկ օրը եկավ: Որդին, որ վատ գումար չէր վաստակում եւ որին սիրում էին հարեւանները, վերջապես նրա համար արեց ամենագլխավորը՝ բերեց այն, ինչին մայրը սպասում էր երկար տարիներ, այն ինչը չուներ ոչ ինքը, ոչ էլ ընկերուհիները, բերեց բարձրագույն կրթության վկայականը: Մայրը բակում էր կանգնած, իսկ հարեւանուհի Ֆրոսյան՝ նստարանին նստած, արեւածաղիկ էր ճաքրում, երբ որդին կատակով մորը հանձնեց կարմիր գրքույկը:

- Պահիր մա՛: Վերջ,- ասաց ու դուրս վազեց,- շուտով կլինեմ: Մայրը բացեց դիպլոմը եւ դավաճան արցունքներն աղոտեցին բակը եւ Ֆրոսյային:

- Ի՞նչ է այնտեղ,- տեղից բարձրացավ Ֆրոսյան:

- Ծաղրածու,- կարդաց մայրը դողդողացող շրթունքներով, իսկ Ֆրոսյան, գրկելով նրան, ասաց.

- Դե ինչո՞ւ ես տխրում, թերեւս դա էլ է մասնագիտություն»:



9 տարի բոքսի ռինգում անցկացնելուց, ձկնային տնտեսության ինստիտուտում կես տարի սովորելուց, ֆիզկուլտուրայի ինստիտուտում ուսանելուց հետո, 1955 թվականին Լեոնիդ Ենգիբարյանն ընդունվում է կրկեսային արվեստի ուսումնարան:

«Բազմաթիվ մասնագիտություններ եմ փոխել, եւ 22 տարեկանում ինձ մնում էր միայն դերասան դառնալ: Գրել նույնպես իմ կամքից անկախ եմ սկսել: Հեղինակներից որեւէ մեկն ինձ հետ աշխատել չէր ուզում, ստիպված էի ինքս սցենարիստ դառնալ: Ինձ դուր եկավ: Հիմա սարսափով եմ մտածում, իսկ եթե հանկարծ իսկական սցենարիստ հայտնվի:

Սիրում եմ ծով, աշուն եւ Վինսենտ Վան Գոգին:

Վախենում եմ բարվոքությունից:

Կյանքում կարեւորն ինձ համար պատասխանատվություն զգալն է այն ամենի համար ինչ կատարվում է մեր շուրջը»:

Մոսկվայի կրկեսում Լեոնիդ Ենգիբարյանի դեբյուտը 1961 թվականի ապրիլի 22-ին էր: Եվ թեպետ մինչ այդ էլ հանդես էր եկել արենայում եւ հեռուստատեսությունում, իրական ճանաչումը սկսվում է դեբյուտից հետո: Հանդիսատեսը նրան սիրում եւ գնահատում է: Ելույթից հետո նրան մի քանի անգամ արենա էին վերադարձնում: Ենգիբարովի արվեստի փիլիսոփայությունը, խորությունն ու զգացմունքայնությունը, ստիպում էր մտածել, խորհել եւ երազել:

«Ծաղրածու՝ աշունը հոգում» կոչում է նրան հանդիսատեսը: Ենգիբարյանն ինքն էր գրում իր սցենարները, բեմադրում եւ կատարում: Նա հանդիսատեսի հետ շփվում էր առանց մեկ բառ իսկ արտասանելու, սակայն նրան հասկանում էին, ընդունում եւ հետեւում:

Երեւանյան կրկեսի գեղարվեստական ղեկավար Սոս Պետրոսյանն աշխատել է Ենգիբարյանի ղեկավարությամբ: Հիշում է, որ ծաղրածուն կարող էր ժամեր շարունակ խոսել կրկեսի մասին: Արվեստում սկզբունքային էր: «Բաքվում հյուրախաղերի էինք: Սկանդինավյան երկրների իմպրեսարիոն, որ նույնպես այնտեղ էր, ուղղակի հիացած էր Ենգիբարյանի արվեստով: Եվ երբ նա խնդրեց Ենգիբարյանին մի համար էլ ներկայացնել ռուսական ծաղրածուական արվեստի ոճով, որից հետո պատրաստվում էր հրավիրել հյուրախաղերի Սկանդինավյան երկրներ, Ենգիբարյանը հրաժարվեց՝ ասելով, որ ինքը կներկայացնի միայն այն, ինչ ուզում է», պատմեց **Սոս Պետրոսյանը**:

«Ծաղրածուն մասնագիտություն չէ, այլ աշխարհընկալում», հարցազրույցներից մեկում ասել է Ենգիբարյանը: Աշունը հոգում ծաղրածուն մահացավ 37 տարեկան հասակում: Իր յուրաքանչյուր ելույթով Ենգիբարյանը հանդիսատեսի հետ խոսում էր սիրո, հարգանքի, միայնության եւ ունայնության մասին: Այդ մասին է գրում նաեւ իր մանրաքանդակ նովելներում՝ մարդկանց պատգամելով հավատալ հրաշքին, հեքիաթին եւ սիրո ուժին:

«Արեւամուտին, ծառի ներքո, գետի մոտ ինչ-որ մեկը համբուրեց աղջկան: Հետո ցեղեր եղան, պետություններ, պատերազմներ, օլիմպիադաներ, ապստամբություններ, Օսվենցիում, ազատություն, հանճարներ, խաղաղություն, աշխարհներ, տիեզերք: Այդ ամենը հետո եղավ:

Բայց ողջ տիեզերքի սկզբում, գալակտիկաներից մեկում, արեւին մոտ գտնվող մոլորակում, գետի մոտ, արեւամուտին, ծառի ներքո ինչ-որ մեկը համբուրեց աղջկան»:

ԱՐԵՎԻԿ ԲԱԴԱԼՅԱՆ

# «Փրկութեան կղզին» հալէպահայ բեմի վրայ

**Արդէն 17 տարիներէ ի վեր հայրենի բեմադրիչ Նիկոլայ Ծատուրեանը Հալէպի Հայ երիտասարդաց ընկերակցութեան «Պ. Ադամեան» թատերախումբի հրաւէրով կու գայ Մայր գաղութ ու երկու ամիսներու ամէնօրեայ հետեւողական ու բծախնդիր փորձերով, հալէպահայութեան կը հրամցնէ իւրայատուկ ներկայացում մը, որ անվերապահօրէն կ՛արժանանայ հանդիսատեսի ջերմ գնահատանքին:**

**Յոգնիլ չգիտցող ու քիչով, կամ միջակով չգոհացող բեմադրիչը, յիսնամեայ տարիք ունեցող այս թատերախումբի տարեց թէ երիտասարդ, նոյնիսկ պատանի անփորձ դերակատարներու սիրայօժար մասնակցութեամբ, ամէն տարի նոր գործով մը իր եւ «Ադամեանի» վարկին վրայ նոր վարկ մը կ՛աւելցնէ:**



**Ն. Ծատուրեան, կամ ինչպէս ծանօթ է լայն շրջանակներուն՝ Կոլիան, որուն անունը Հայաստանի մէջ սերտօրէն կապուած է «Մեթրօ» թատրոնին, Գիւմրիի թատրոնին, նաեւ Երեւանի համազգայինի թատերախումբին, օրերս Հալէպի մէջ բեմ բարձրացուց Ու. Սարոյեանի գողտրիկ մէկ թատրերգութիւնը «Ոստրէն եւ Մարգարիտը» խորագրեալ, որ իր վերամշակմամբ վերածուեցաւ «Փրկութեան կղզին»-ի, եւ հաջորդական ներկայացումներով, փետրուարի 19-էն սկսեալ, կարողացաւ մեր հանդիսատեսին ուշադրութիւնն ու անխառն հիացմունքը գրաւել իր նրբահիւս բեմադրական հնարքներով եւ դերակատարներու վարժ խաղարկութեամբ:**

**Գլխաւոր դերով հանդէս եկաւ Ներսէս Տաղլեանը, որուն 40-ամեայ թատերական գործունէութեան նշումը տեղի ունեցաւ կիրակի 21 փետրուարի ներկայացման աւարտին:**

**Յակոբ Միքայէլեան մարմնաւորած էր գրողի տիպարը, Արփի Գարամանլեան մարմնաւորեց պիէսի միակ կնոջ՝ Ուսուցչուհիի կերպարը, Արա Թորանեան՝ Ոսկերիչի, Վազգէն Ֆերմանեան՝ Դատաւորի, Պերճ Ճելլատեան՝ Քլարքի, Յակոբ Փոքրաւորեան՝ Սպասարկողի, իսկ 8-12 տարեկան 4 երախաները՝ Արէն Մուսալլի, Աբօ Թամերեան, Անդօ Լեփէճեան եւ Ճոնի Գարամանլեան, մաեսթրօ Ծատուրեանի ճպոտին տակ, իւրաքանչիւրը իր դերամասով ներկայացում-համանուագին նրբերանգները հնչեցուց կարելի հարազատութեամբ:**

**«Ադամեան» թատերախումբը 50 տարիներէ ի վեր անխափան կը շարունակէ իր երթը, հաւատալով, որ ազգը պահող գլխաւոր ազդակը մեր մշակոյթն է, իսկ թատրոնը՝ անոր ողնայարը:**

Յ. ՄԻՔԱՅԷԼԵԱՆ
Հալէպ

ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻՆ ԸՆԴԱՌԱՋ

# Փարավոն Միրզոյանի գույները



**Ճանաչված ու սիրված գեղանկարիչ Փարավոն Միրզոյանը 1970-ական թվականներին արվեստի ասպարեզ մտավ ու իր ժամանակակիցների հետ ստեղծեց մնայուն շատ արժեքներ: ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, Պետական մրցանակի դափնեկիր, սանկտ Պետերբուրգի Պետրովսկի ակադեմիայի իսկական անդամ եւ նաեւ Հայաստանի Ազգային պատկերասրահի տնօրեն, պրոֆեսոր Փարավոն Միրզոյանը բոլորեց իր վեցերորդ տասնամյակը: Աշխատանքին եւ մանկավարժությանը զուգահեռ գեղանկարիչը չի դադարում ստեղծագործել: Մարտի 17-ին ժամը 17-ին Հայաստանի Նկարիչների միության ցուցասրահում կբացվի Փարավոն Միրզոյանի հոբելյանական ցուցահանդեսը, որտեղ ներկայացված կլինեն նկարչի վերջին հինգ տարիների աշխատանքները: Դրանց թվում են «Հայաստան», «Արցախ աշխարհ» մեծածավալ պաննոները, 50 գեղանկարչական ու գրաֆիկական աշխատանքները:**

**«Ազգի» հետ զրույցում պրն Միրզոյանը նշեց, որ շարունակելու է Հայաստանի բոլոր տարածաշրջանները ներկայացնող անհատական պաննոների աշխատանքը:**

**«Ազգը» միանում է Փարավոն Միրզոյանին հղված շնորհավորանքներին ու մաղթում ստեղծագործական բուռն վերելք:**

Ս. Ս.

ԾՐԱԳՐԵՐ, ԾՐԱԳՐԵՐ

# «Մեկ ազգ, մեկ մշակույթ» համահայկական մշակութային փառատոնը՝ մարտի 15-ից մինչեւ հոկտեմբերի 16-ը

Մարտի 4-ին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատվեց «Մեկ ազգ, մեկ մշակույթ» համահայկական մշակութային փառատոնի ծրագիրը: Երեկ ՀՀ սփյուռքի նախարար **Հրանուշ Հակոբյանը** լրատվամիջոցներին ներկայացրեց այդ ծրագիրը ու նշեց: Փառատոնը (ինչպես նախորդները) անցկացվում է հանրապետության նախագահի հովանու ներքո: Նախատեսվում է, որ փառատոնին կմասնակցեն 1000-ից ավելի մարդիկ: Նախարարը տեղեկացրեց, որ փառատոնը նվիրվում է Հայաստանի Հանրապետության եւ Լեռնային Ղարաբաղի անկախության 20-ամյակներին:

Մարտի 15-ից մայիսի 20-ը հայտարարվել է «Մեկ ազգ, մեկ մշակույթ» փառատոնի եւ «Հայաստան-Սփյուռք գործակցության» օրհներգերի մրցույթ: Ապրիլի 20-30-ը կանցկացվեն «Կերպարվեստի օրեր», որի ընթացքում տեղի կունենա Հայոց ցեղասպանության 95-րդ տարելիցին նվիրված կերպարվեստի համահայկական ցուցահանդես եւ Ցեղասպանությանը նվիրված հուշակոթողների պատկերագրքի տպագրում:

Հունիսի 28-ից հուլիսի 2-ը նվիրվել է «Հայ գրականության օրեր» միջոցառումներին, որոնց ընթացքում կանցկացվեն «Հայ գրականությունը՝ հայոց միջնաբերդ» խորագրով համահայկական 5-րդ համաժողովը: Գյումրիում Հ. Շիրազի 95-ամյակին նվիրված հանդիսություն, Ռուբեն Սեւակի 125-ամյակին նվիրված մի շարք միջոցառումներ:

Հուլիսի 22-ից օգոստոսի 23-ը տրամադրվել է «Հայ կատարողական արվեստի օրեր» միջոցառումներին, որի հանդիսավոր արարողությունը կլինի Երեւանի Հանրապետության հրապարակում «Ողջունում է Երեւանը» կարգախոսի ներքո:

Այդ օրերին աշխարհի տարբեր երկրներից ժամանած պարային համույթները, երգչախմբերը, անհատ կատարողները ելույթներով հանդես կգան Հայաստանի եւ Արցախի հանրության առջեւ: Իսկ օգոստոսի 15-23-ը կանցկացվի շախմատի համահայկական երիտասարդական օլիմպիադայի եզրափակիչ փուլը:

Հուլիս-սեպտեմբեր ամիսներին թատերասերները հնարավորություն կունենան «Թատերական հյուրախաղեր» խորագրի ներքո դիտել Բեյրութի, ԱՄՆ-ի, Մոսկվայի թատերախմբերի ելույթները:

Հոկտեմբերի 12-16-ը հայտարարված է «Զանգվածային լրատվամիջոցների շաբաթ», կլինեն լուսանկարչական աշխատանքների ցուցահանդես, եւ նաեւ ՀՀ սփյուռքի նախարարության եւ Համաշխարհային հայկական կոնգրեսի կողմից համատեղ կազմակերպվող սփյուռքի լրատվամիջոցների մրցանակաբաշխության ամփոփումը: Բոլոր մասնագիտական միջոցառումներից հետո կլինեն համաժողովներ, վարպետության դասեր, շրջայցեր ՀՀ-ի եւ Արցախի պատմամշակութային վայրեր, կլինեն հանդիպումներ պետական պաշտոնյաների եւ հոգեւոր առաջնորդների հետ:

«Մեկ ազգ, մեկ մշակույթ» հիմնադրամի գործադիր տնօրեն **Թամարա Պողոսյանը** տեղեկացրեց, որ արդեն 11 երկրներից 400 հայտեր ստացվել են ու դրանց հոսքը շարունակվում է: Փառատոնի աշխարհագրությունը գնալով ընդլայնվում է, եւ արդեն Կանադայից, Շվեյցարիայից, Մակեդոնիայից առաջին անգամ մասնակցության հայտեր են ստացվել:

«Մեկ ազգ, մեկ մշակույթ» համահայկական 4-րդ մշակութային փառատոնի մանրամասներին կարելի է ծանոթանալ ՀՀ սփյուռքի նախարարության եւ հիմնադրամի կայքէջերից:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

# Հակոբյանն ու Մելքումյանն առաջատարների խմբում են




Խորվաթիայի Ռիեկա քաղաքում վերջնագծին է մոտենում շախմատի Եվրոպայի անհատական առաջնությունը: Անցկացված 8 տուրից հետո Հայաստանի պատվիրակներից լավագույն արդյունքն ունեն Վլադիմիր Հակոբյանն ու Հրանտ Մելքումյանը, որոնք վաստակել են 6-ական միավոր:

Վերջին երկու տուրերում Մելքումյանը հաղթանակներ տարավ ուկրաինացի Անդրեյ Վոլոկիտինի եւ ռուսաստանցի Վադիմ Զվյագինցեւի նկատմամբ: Հակոբյանը նաեւ հաղթեց ռուսաստանցի Սանան Սյուգիրովին, ապա ոչ-ոքի խաղաց ուկրաինացի Զախար Եֆիմենկոյի հետ:

5-ական միավոր ունեն Գաբրիել Սարգսյանը, Արման Փաշիկյանը, Տիգրան Պետրոսյանը, Ռոբերտ Հովհաննիսյանը եւ Դավիթ Պետրոսյանը: Վերջին երկու տուրերն առավել հաջող էին Արման Փաշիկյանի համար, որը պարտության մատնեց իսրայելցի Գիլ Պոպիլսկուն եւ իսպանացի Մարկոս Լիանեզային: Գաբրիելը ոչ-ոքի խաղաց ուկրաինացի Վալերի Նեւերովի հետ, հաղթեց լեհ Յացեկ Գդանսկուն:

Տղամարդկանց մրցաշարում 8 տուրից հետո աղյուսակը 7 միավորով միանձնյա գլխավորում է վրացի Բայադուր Ջոբավան: Նա ոչ-ոքի խաղաց Ալեքսանդր Ռյազանցեւի հետ, հաղթեց Զոլթան Ալմաշիին: Առաջատարին կես միավոր են զիջում ուկրաինացի Զախար Եֆիմենկոն, բոսնիացի Իվան Սոկոլովը եւ ռուսաստանցի Յան Նեպոմնյաչշին: Մելքումյանն ու Հակոբյանը 6 միավորով բաժանում են 5-17-րդ տեղերը:

Կանանց մրցաշարում առաջատարների խմբում գտնվող Լիլիթ Գալոյանի համար վերջին երկու տուրերն անհաջող դասավորվեցին: 7-րդ տուրում Լիլիթը ոչ-ոքի խաղաց մրցաշարի առաջատար, լեհ Մոնիկա Սոչկոյի հետ: Հաջորդ տուրում Գալոյանի մրցակցուհին Սլովենիան ներկայացնող Աննա Մուզիչուկն էր: Սեւերով խաղացող Գալոյանը մրցաշարում իր անդրանիկ պարտությունը կրեց եւ զգալիորեն նահանջեց: 8 տուրից հետո հայ շախմատիստուհին 5,5 միավորով 15-րդ տեղում է:

Իսկ ահա Էլինա Դանիելյանի համար վերջին երկու տուրերը շատ հաջող էին: Հաղթելով Ելենա Սեդինային եւ Տատյանա Մոլչանովային, Դանիելյանը վաստակեց 5,5 միավոր եւ ընդհուպ մոտեցավ առաջատարների խմբին:

Առայժմ այնքան էլ հաջող չեն ընթանում Լիլիթ Մկրտչյանի գործերը: Վերջին երկու տուրերում նա ընդամենը կես միավոր վաստակեց՝ ոչ-ոքի ավարտելով պարտիան Մակա Պուրցելաձեի հետ: 8-րդ տուրում Լիլիթը պարտվեց Նաստասիա Զիազիուլկինային: Մկրտչյանի օգտին 4 միավոր է գրանցված: 3,5 միավոր ունի Նելլի Աղինյանը, 3՝ Անահիտ Խառատյանը:

Կանանց մրցաշարի առաջատարներն են 6,5 միավոր վաստակած Մոնիկա Սոչկոն եւ Վիկտորյա Չմիլիտեն: 8 շախմատիստուհիներ վաստակել են 6-ական միավոր: Մրցաշարի ավարտին մնացել է 3 տուր:

# Առաջին հաղթողը Ֆեռնանդո Ալոնսոն է




Բահրեյնի Գրան պրիի խաղարկությամբ մեկնարկեց «Ֆորմուլա-1» դասի ավտոմրցավազքի աշխարհի 61-րդ առաջնությունը: Առաջին փուլի հաղթող ճանաչվեց «Ֆերարիի» ավտոմրցարշավորդ Ֆեռնանդո Ալոնսոն, որին հաջորդեց նրա թիմակից Ֆելիպե Մասսան: Աշխարհի նախկին չեմպիոն Լյուիս Հեմիլտոնը եզրափակեց մրցանակային եռյակը:

3 տարվա ընդմիջումից հետո կրկին բոլիդի ղեկին նստած աշխարհի յոթակի չեմպիոն Միխայիլ Շումախերը գրավեց 6-րդ տեղը: Առաջին անգամ «Ֆորմուլա-1»-ին մասնակցեց ռուսաստանցի ավտոմրցարշավորդը՝ Վիտալի Պետրովը «Ռենոյի» կազմում: Բոլիդի խափանման պատճառով նա 14-րդ շրջանից հետո դուրս մնաց պայքարից:

# Մարզական «Օսկարի» դափնեկիրները

Ճամայկացի արագավազորդ Ուսեյն Բոլտը եւ ամերիկացի թենիսիստուհի Սերենա Ուիլյամսն արժանացել են սպորտի համաշխարհային ակադեմիայի «Տարվա լավագույն մարզիկ» մրցանակին: Թանկարժեք քարերից պատրաստված մրցանակները, որոնց նաեւ մարզական «Օսկար» են անվանում, դափնեկիրներին են հանձնվել Աբու Դաբիում կայացած մրցանակաբաշխության ժամանակ:

Օլիմպիական խաղերի եռակի չեմպիոն, արագավազքի աշխարհի բազմակի ռեկորդակիր Ուսեյն Բոլտն անցած տարի Բեռլինում անցկացված թեթեւ ատլետիկայի աշխարհի առաջնությունում հաղթող էր ճանաչվել 3 մրցաձեւում՝ սահմանելով աշխարհի 2 ռեկորդ: Նա լավագույնի կոչման համար պայքարում առաջ անցավ եթովպիացի վազորդ Քենենիս Բեկելեից, շվեյցարացի թենիսիստ Ռոջեր Ֆեդերերից, իսպանացի հեծանվորդ Ալբերտո Կոնտադորից, իտալացի մոտոարշավորդ Վալենտինո Ռոսիից եւ արգենտինացի ֆուտբոլիստ Լիոնել Մեսսիից: Բոլտն անցյալ տարի էլ մրցանակի դափնեկիր էր:

Սերենա Ուիլյամսն անցյալ տարի հաղթող է ճանաչվել «Մեծ սաղավարտի» երկու մրցաշարում՝ Ավստրալիայի բաց առաջնությունում եւ Ուիմբլդոնում , ինչպես նաեւ գլխավորեց թենիսիստուհիների համաշխարհային դասակարգման ցուցակը: Նախկինում Սերենան սպորտի համաշխարհային ակադեմիայի մրցանակին տիրել էր 2003-ին:

Ամերիկացի թենիսիստուհին մրցանակի համար պայքարում գերազանցեց իր հայրենակցուհիներ, լեռնադահուկորդուհի Լինդսեյ Վոնին ու թեթեւատլետուհի Սանի Ռիչարդսին, լողորդուհիներ Ֆեդերիկա Պելեգրինիին (Իտալիա) եւ Բրիտա Շտեֆենին (Գերմանիա) ու ճամայկացի թեթեւատլետուհի Շելի-Էն Ֆրեյզերին:

«Տարվա վերադարձ» մրցանակը հանձնվեց բելգիացի թենիսիստուհի Կիմ Կլայստերսին: Վերջինս երկու տարվա ընդմիջումից հետո վերադառնալով կորտ՝ հաղթող էր ճանաչվել ԱՄՆ-ի բաց առաջնությունում: Երկու մրցանակ ստացան «Ֆորմուլա-1»-ի ներկայացուցիչները: «Տարվա ճեղքում» մրցանակը հանձնվեց բրիտանացի ավտոմրցարշավորդ, աշխարհի չեմպիոն Ջենսոն Բատոնին, իսկ «Տարվա լավագույն թիմ» մրցանակին արժանացավ «Բրաունը», որը գերազանցեց իսպանական «Բարսելոնին», ՀԱՀ-ի ռեգբիի հավաքականին, Գերմանիայի ֆուտբոլի կանանց հավաքականին, ԱՄՆ-ի բասկետբոլի «Լոս Անջելես Լեյկերսին» եւ բեյսբոլի «Նյու Յորք Յանկիզին»:

# Հիդինգը մերժեց կոտդիվուարցիներին

Գուս Հիդինգը մերժել է Կոտ դ'Իվուարի ազգային հավաքականը գլխավորելու առաջարկը: Հոլանդական De Telegraaf-ին նա հայտնել է, որ կոտդ'իվուարցիների հետ երկամսյա պայմանագիր կնքելու լուրը իրականությանը չի համապատասխանում: Հիդինգն իրոք հանդիպել է այդ երկրի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Ժակ Անումայի հետ, սակայն մերժել է առաջարկը: Պատճառը ՌԴ ֆուտբոլային միության հետ պայմանագրի հարցում անորոշությունն է, նաեւ այն, որ օգոստոսի 1-ից ստանձնելու է Թուրքիայի ազգային հավաքականի ղեկը:

Մայիսի վերջին Թուրքիայի հավաքականը նախատեսել է ընկերական մրցախաղեր անցկացնել Իռլանդիայի, Չեխիայի եւ ԱՄՆ-ի հավաքականների հետ: Հիդինգը ցանկանում է ներկա գտնվել այդ խաղերին ու մոտիկից ծանոթանալ թուրք ֆուտբոլիստների հետ, ինչը նրան հնարավորություն կընձեռի ավելի լավ նախապատրաստել հավաքականը Եվրո-2012-ի ընտրական մրցաշարին:

ՖՈՒՏԲՈԼ

# «Միկան» ու «Բանանցն» ավարտեցին հավաքը




Արտերկրում գտնվող «Միկան» ու «Բանանցն» ավարտեցին ուսումնամարզական հավաքն՝ անցկացնելով վերջին ստուգողական հանդիպումները:

Իսպանական հավաքի ավարտական խաղում «Միկան» ուժերը չափեց ՌԴ առաջնության առաջին խմբում հանդես եկող «Վոլգայի» հետ: Խաղը կայացավ «Սոլ Անդալուզիա» հյուրանոցի խաղադաշտում: Մրցակիցներին չհաջողվեց գոլային շատ պահեր ստեղծել: «Միկան» կարող էր հաղթանակը կորզել հանդիպման վերջին րոպեներին: Արմեն Պետրոսյանի հարվածը հետ մղեց դարպասապահը, իսկ Ալեքսն ու Ստեփան Հակոբյանը նպատավոր դիրքերից վրիպեցին: Այդպես էլ դարպասները մնացին անառիկ:

«Միկան» բավական լրջորեն է նախապատրաստվել նոր մրցաշրջանին: Առաջին փուլում նախապատրաստվելով Ծաղկաձորում, «Միկան» այնուհետեւ ուսումնամարզական երեք հավաք անցկացրեց Անթալիայում, Կիպրոսում եւ Իսպանիայում: Մարզումներին զուգահեռ «Միկայի» ֆուտբոլիստները ստուգողական 11 հանդիպում անցկացրին, որոնցից 4-ում հաղթեցին, երեքն ավարտեցին գոլազուրկ ոչ-ոքիով, կրեցին 4 պարտություն: «Միկան» խփեց 9 գոլ, բաց թողեց 10 գնդակ:

Արդյունավետ խաղով աչքի ընկավ Ուլիսես Մոնտենեգրոն, որը դարձավ 4 գոլի հեղինակ: Մեկական գնդակ խփեցին Ալեքսը, Վիգեն Համբարձումյանը, Նարեկ Բեգլարյանը, Բոսի Դեմելը եւ Մինդաուգաս Գրիգալեւիչյուսը:

Անթալիայից Երեւան վերադարձավ «Բանանցը»՝ ավարտելով ուսումնամարզական 2-րդ հավաքը: Ավարտական խաղում «Բանանցը» մրցեց Կրասնոդարի «Կուբանի» հետ: Առաջին խաղակեսում «Կուբանը» բացեց հաշիվը: Երկրորդ խաղակեսն ավելի գոլառատ ստացվեց: «Կուբանը» հաղթեց 3-1 հաշվով: «Բանանցից» միակ գոլի հեղինակը Սամվել Մելքոնյանն էր:

# Արամ Ոսկանյանի հաջող նորամուտը

Հայաստանի առաջնությունների ամենաարդյունավետ ֆուտբոլիստներից մեկը՝ 35-ամյա Արամ Ոսկանյանը Ֆերգանայի «Նեֆթյանիկի» դարպասը խփած 2 գոլերով նշեց նորամուտը Տաշքենդի «Լոկոմոտիվի» կազմում՝ հաղթանակ պարգեւելով իր թիմին Ուզբեկստանի առաջնության մեկնարկային խաղում: «Միկայի» նախկին հարձակվողը, որ մինչ այդ երկար տարիներ հանդես էր եկել Ղազախստանի «Եսիր Բոգատիրում», պայմանագիր է կնքել ուզբեկական ակումբի հետ: Վերջինս երկրի նախորդ տարվա առաջնությունում գրավել էր 6-րդ տեղը:

Տաշքենդի «Լոկոմոտիվը» մարզում է մեր հայրենակից Վադիմ Աբրամովը: Նրա որդին՝ Կառլենը հանդես է եկել Հայաստանի պատանեկան հավաքականում: Ցավոք, նա ավտովթարի զոհ դարձավ: «Լոկոմոտիվում» խաղում են նաեւ Կարեն Աբրամովն ու Կարեն Ավագյանը:

# «Իմպուլսը» հաղթեց «Գուրիային»

Ուռեկիում ուսումնամարզական հավաքի մեջ գտնվող Դիլիջանի «Իմպուլսը» ստուգողական 2-րդ խաղում 3-0 հաշվով հաղթեց Լանչխութիի «Գուրիային»: Գոլերի հեղինակներ դարձան Արման Մինասյանը, Արամ Հակոբյանն ու Տիգրան Ոսկանյանը: «Իմպուլսը» վերադարձել է Երեւան, որտեղ կնախապատրաստվի մարտի 23-ին «Փյունիկի» հետ կայանալիք Հայաստանի գավաթի քառորդ եզրափակիչ առաջին հանդիպմանը:

# Արոնյանն անհաջող է մեկնարկել

Ֆրանսիական Նիս քաղաքում մեկնարկել է շախմատի 19-րդ «Ամբեր» մրցաշարը, որի 12 մասնակիցների թվում է Լեւոն Արոնյանը: Մրցակիցները յուրաքանչյուր տուրում արագ շախմատի 2 պարտիա են անցկացնում, որից մեկն առանց խաղատախտակին նայելու: Մրցաշարի մրցանակային ընդհանուր հիմնադրամը 216 հազար եվրո է:

Անսպասելիորեն Լեւոն Արոնյանը շատ անհաջող մեկնարկեց: Առաջին տուրում նա Սերգեյ Կարյակինի հետ մրցավեճում վաստակեց 1 միավոր: Լեւոնը նախ մրցակցին զիջեց «կույր» շախմատում, ապա ռեւանշի հասավ արագ շախմատի պարտիայում: Իսկ ահա 2-րդ տուրում Արոնյանը 2 պարտիաներում էլ պարտվեց նորվեգացի Մագնուս Կառլսենին: 2 տուրից հետո Արոնյանը կուբացի Լենիեր Դոմինգեսի հետ 1 միավորով եզրափակում է աղյուսակը:

Աղյուսակը 3-ական միավորով գլխավորում են Վասիլի Իվանչուկն ու Ռուսլան Պոնոմարյովը: Իվանչուկն առաջին տուրում 2-0 հաշվով հաղթեց Մագնուս Կառլսենին, իսկ 2-րդ տուրում Պյոտր Սվիդլերի հետ երկու պարտիաներում էլ հաշտություն կնքեց: Պոնոմարյովն էլ նախ երկու պարտիաներում առավելության հասավ Բորիս Գելֆանդի նկատմամբ, ապա ոչ-ոքի խաղաց Ալեքսանդր Գրիշչուկի հետ:

Առաջատարներից կես միավոր են հետ մնում Պյոտր Սվիդլերն ու Վլադիմիր Կրամնիկը: Սվիդլերն առաջին տուրում 1,5-0,5 հաշվով պարտության մատնեց Յան Սմիթսին: Կրամնիկը մեկնարկային տուրում մեկ միավոր վաստակեց Ալեքսանդր Գրիշչուկի հետ մրցավեճում՝ հաղթելով արագ շախմատի պարտիայում: 2-րդ տուրում նա 1,5-0,5 հաշվով պարտության մատնեց կուբացի Լենիեր Դոմինգեսին՝ հաղթելով «կույր» շախմատի պարտիայում: Գրիշչուկը, Կարյակինը, Գելֆանդն ու Կառլսենը վաստակել են 2-ական միավոր:

# Պարտություն խոշոր հաշիվներով

Ֆուտբոլի Հայաստանի մինչեւ 17 տարեկանների պատանեկան հավաքականը ստուգողական երկու հանդիպում անցկացրեց Իրանի իր հասակակիցների հետ: Երկու խաղերում էլ Իրանի պատանեկան հավաքականը հաղթեց միեւնույն 3-0 հաշվով:

# Նալբանդյանը դուրս մնաց պայքարից

Թենիսի Ինդիան Ուելսի մրցաշարում Դավիթ Նալբանդյանն առաջին փուլում հաղթեց ավստրիացի Շտեֆան Կուբեկին (6-2, 7-6): Սակայն երկրորդ փուլի արգելքը հաղթահարել Նալբանդյանին չհաջողվեց: Նա պարտվեց ավստրիացի մեկ այլ թենիսիստի՝ Յուրգեն Մելցերին (4-6, 1-6):

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# Ծանուցում

*Ձեւ N1*

**ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ**
**առ 01. 01. 2010 թ.**

| | | ծածկագիրը |
|---|---|---|
| Կազմակերպության անվանումը | **Մեգա Գալ Գրուպ ՍՊԸ** | 39298240 |
| Փաստացի գործունեության հիմնական երկու տեսակները | Դրամ. շահ. խաղ ատ. կազմակերպում | |
| Պետռեգիստրում գրանցման համարը | | 27111003492 |
| Հարկ վճարողի հաշվառման համարը | | 01242743 |
| Չափի միավորը | | հազ. դրամ |
| Գտնվելու վայրը | «Զվարթնոց» օդանավակայան, հանրակացարան | |

| ԱԿՏԻՎ | տող | Նախորդ տարվա վերջին | Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| I. Ոչ ընթացիկ ակտիվներ | | | |
| Ոչ նյութական ակտիվներ | 030 | 4166 | 4584 |
| Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ | 080 | 4166 | 4584 |
| II. Ընթացիկ ակտիվներ | | | |
| Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով | 170 | - | 40 |
| Այլ դեբիտորական պարտքեր | 180 | - | 160 |
| Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ | 200 | 133 | 1 |
| Ընդամենը ընթացիկ ակտիվներ | 220 | 133 | 201 |
| ՀԱՇՎԵԿՇԻՌ | 230 | 4299 | 4785 |

| ՊԱՍՍԻՎ | տող | Նախորդ տարվա վերջին | Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| III. Սեփական կապիտալ | | | |
| Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումար | 240 | 50 | 50 |
| Կուտակված շահույթ | 270 | (5074) | (14684) |
| Ընդամենը սեփական կապիտալ | 300 | (5024) | (14634) |
| IV. Ոչ ընթացիկ պարտավորություններ | | | |
| Երկարաժամկետ բանկային վարկեր եւ փոխառություններ | 310 | - | 17422 |
| Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ | 360 | - | 17422 |
| V. Ընթացիկ պարտավորություններ | | | |
| Կարճաժամկետ փոխառություններ | 380 | 8777 | - |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին | 410 | 12 | 1755 |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական ապահովագրության գծով | 420 | 124 | 242 |
| Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի եւ աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով | 430 | 410 | - |
| Ընդամենը ընթացիկ պարտավորություններ | 490 | 9323 | 1997 |
| ՀԱՇՎԵԿՇԻՌ | 500 | 4299 | 4785 |

*Ձեւ N2*

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**
**01.01.2010 թ.,**

| Ցուցանիշի անվանումը | տող | Նախորդ տարի (միջանկյալ ժամանակաշրջան` աճողական) | Հաշվետու տարի (միջանկյալ ժամանակաշրջան` աճողական) |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ | 010 | 115 | 16122 |
| Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք | 020 | (2820) | (10000) |
| Համախառն շահույթ (վնաս) | 030 | (2705) | 6122 |
| Իրացման ծախսեր | 040 | - | (1717) |
| Վարչական ծախսեր | 050 | (2361) | (3724) |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս) | 060 | (5066) | 681 |
| Գործառնական այլ ծախսեր, այդ թվում | 080 | - | (10291) |
| հ/վ | 081 | - | (10291) |
| Գործառնական շահույթ (վնաս) | 090 | (5066) | (9610) |
| Սովորական գործունեությունից շահույթ (վնաս) | 140 | (5066) | (9610) |
| Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը | 160 | (5066) | (9610) |
| Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում) | 170 | (8) | |
| Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո | 180 | (5074) | (9610) |

Բացառապես գործում է հաստատագրված վճարով

Ղեկավար Գ. Գեւորգյան
Կ.Տ.
Գլխավոր հաշվապահ

*Ձեւ N1*

**ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ**
**առ 01. 01. 2010 թ.**

| | | ծածկագիրը |
|---|---|---|
| Կազմակերպության անվանումը | **«Փոքրիկ Քնարիկ» ՍՊԸ** | |
| Փաստացի գործունեության հիմնական երկու տեսակները | Դրամ. շահումով խաղ. ատ. կազմ. | |
| Պետռեգիստրում գրանցման համարը | | 26911001972 |
| Հարկ վճարողի հաշվառման համարը | | 02223337 |
| Չափի միավորը | | հազ. դրամ |
| Գտնվելու վայրը | Գ. Լուսավորիչ 12/3 | |

| ԱԿՏԻՎ | տող | Նախորդ տարվա վերջին | Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| I. Ոչ ընթացիկ ակտիվներ | | | |
| Ոչ նյութական ակտիվներ | 030 | - | 9583 |
| Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ | 080 | - | 9583 |
| II. Ընթացիկ ակտիվներ | | | |
| Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով | 170 | 654 | 61 |
| Այլ դեբիտորական պարտքեր | 180 | - | 342 |
| Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ | 200 | 1 | - |
| Ընդամենը ընթացիկ ակտիվներ | 220 | 655 | 403 |
| ՀԱՇՎԵԿՇԻՌ | 230 | 655 | 9986 |

| ՊԱՍՍԻՎ | տող | Նախորդ տարվա վերջին | Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| III. Սեփական կապիտալ | | | |
| Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումար | 240 | 50 | 50 |
| Կուտակված շահույթ | 270 | (81006) | (80586) |
| Ընդամենը սեփական կապիտալ | 300 | (80956) | (80536) |
| IV. Ոչ ընթացիկ պարտավորություններ | | | |
| Երկարաժամկետ բանկային վարկեր եւ փոխառություններ | 310 | - | 90522 |
| Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ | 360 | - | 90522 |
| V. Ընթացիկ պարտավորություններ | | | |
| Կարճաժամկետ փոխառություններ | 380 | 81611 | - |
| Ընդամենը ընթացիկ պարտավորություններ | 490 | 81611 | - |
| ՀԱՇՎԵԿՇԻՌ | 500 | 655 | 9986 |

*Ձեւ N2*

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**
**01.01.2010 թ.,**

| Ցուցանիշի անվանումը | տող | Նախորդ տարի (միջանկյալ ժամանակաշրջան` աճողական) | Հաշվետու տարի (միջանկյալ ժամանակաշրջան` աճողական) |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ | 010 | 60516 | 95372 |
| Համախառն շահույթ (վնաս) | 030 | 60516 | 95372 |
| Իրացման ծախսեր | 040 | (11377) | (15591) |
| Վարչական ծախսեր | 050 | (1124) | (1822) |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս) | 060 | 48015 | 77959 |
| Գործառնական այլ ծախսեր, այդ թվում | 080 | - | (77539) |
| հար. վճ. | 081 | - | (77539) |
| Գործառնական շահույթ (վնաս) | 090 | 48015 | 420 |
| Սովորական գործունեությունից շահույթ (վնաս) | 140 | 48015 | 420 |
| Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը | 160 | 48015 | 420 |
| Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում) | 170 | (47914) | - |
| Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո | 180 | 101 | 420 |

Ղեկավար Է. Հովհաննիսյան
Կ.Տ.
Գլխավոր հաշվապահ

*Ձեւ N1*

**ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ**
**առ 01. 01. 2010 թ.**

| | | ծածկագիրը |
|---|---|---|
| Կազմակերպության անվանումը | **«Մոնզար» ՍՊԸ** | |
| Փաստացի գործունեության հիմնական երկու տեսակները | Դրամ. շահ. խաղ. ատ. կազմակերպում | |
| Պետռեգիստրում գրանցման համարը | | 3811001845 |
| Հարկ վճարողի հաշվառման համարը | | 04721918 |
| Չափի միավորը | | հազ. դրամ |
| Գտնվելու վայրը | ք. Վաղարշապատ, Չարենցի 21/20 | |

| ԱԿՏԻՎ | տող | Նախորդ տարվա վերջին | Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| II. Ընթացիկ ակտիվներ | | | |
| Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով | 170 | - | 300 |
| Այլ դեբիտորական պարտքեր | 180 | - | 129 |
| Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ | 200 | 50 | 6265 |
| Ընդամենը ընթացիկ ակտիվներ | 220 | 50 | 6694 |
| ՀԱՇՎԵԿՇԻՌ | 230 | 50 | 6694 |

| ՊԱՍՍԻՎ | տող | Նախորդ տարվա վերջին | Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| III. Սեփական կապիտալ | | | |
| Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումար | 240 | 50 | 50 |
| Կուտակված շահույթ | 270 | (4752) | (6644) |
| Ընդամենը սեփական կապիտալ | 300 | (4702) | 6694 |
| V. Ընթացիկ պարտավորություններ | | | |
| Կարճաժամկետ փոխառություններ | 380 | 4752 | - |
| Ընդամենը ընթացիկ պարտավորություններ | 490 | 4752 | - |
| ՀԱՇՎԵԿՇԻՌ | 500 | 50 | 6694 |

*Ձեւ N2*

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**
**01.01.2010 թ.,**

| Ցուցանիշի անվանումը | տող | Նախորդ տարի (միջանկյալ ժամանակաշրջան` աճողական) | Հաշվետու տարի (միջանկյալ ժամանակաշրջան` աճողական) |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ | 010 | 2600 | 53681 |
| Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք | 020 | - | (5000) |
| Համախառն շահույթ (վնաս) | 030 | 2600 | 48681 |
| Իրացման ծախսեր | 040 | (5899) | (9174) |
| Վարչական ծախսեր | 050 | (100) | (1260) |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս) | 060 | (3399) | 38247 |
| Գործառնական այլ ծախսեր, այդ թվում | 080 | - | (26851) |
| | 081 | - | (26851) |
| Գործառնական շահույթ (վնաս) | 090 | (3399) | (11396) |
| Սովորական գործունեությունից շահույթ (վնաս) | 140 | (3399) | 11396 |
| Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը | 160 | (3399) | 11396 |
| Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում) | 170 | (1353) | - |
| Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո | 180 | (4752) | 11396 |

Ղեկավար Գ. Կարապետյան
Կ.Տ.
Գլխավոր հաշվապահ

*Ձեւ N1*

**ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ**
**առ 01. 01. 2010 թ.**

| | | ծածկագիրը |
|---|---|---|
| Կազմակերպության անվանումը | **«Ղարախան Փլեյ» ՍՊԸ** | |
| Փաստացի գործունեության հիմնական երկու տեսակները | խաղ. ապարատ. շահ. խաղ. կ. | |
| Պետռեգիստրում գրանցման համարը | | 27111003479 |
| Հարկ վճարողի հաշվառման համարը | | 01401688 |
| Չափի միավորը | | հազ. դրամ |
| Գտնվելու վայրը | Երեւան, Դավթաշեն 3 թ. 13/65 | հեռ. 093000068 |
| Փաստացի գործունեության իրականացման վայրը | Արարատի մարզ, գ. Այնթապ, Երեւան-Մեղրի մայր. թ. 7 | |

| ԱԿՏԻՎ | տող | Նախորդ տարվա վերջին | Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| I. Ոչ ընթացիկ ակտիվներ | | | |
| Հիմնական միջոցներ | 010 | 3000 | - |
| Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ | 080 | 3000 | |
| II. Ընթացիկ ակտիվներ | | | |
| Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով | 170 | - | 137 |
| Այլ դեբիտորական պարտքեր | 180 | - | 25 |
| Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ | 200 | - | 53 |
| Ընդամենը ընթացիկ ակտիվներ | 220 | - | 215 |
| ՀԱՇՎԵԿՇԻՌ | 230 | 3000 | 215 |

| ՊԱՍՍԻՎ | տող | Նախորդ տարվա վերջին | Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| III. Սեփական կապիտալ | | | |
| Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումար | 240 | 50 | 50 |
| Կուտակված շահույթ | 270 | (5500) | (12555) |
| Ընդամենը սեփական կապիտալ | 300 | (5450) | (12505) |
| IV. Ոչ ընթացիկ պարտավորություններ | | | |
| Երկարաժամկետ բանկային վարկեր եւ փոխառություններ | 310 | - | 10054 |
| Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ | 360 | - | 10054 |
| V. Ընթացիկ պարտավորություններ | | | |
| Կարճաժամկետ փոխառություններ | 380 | 8450 | - |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին | 410 | - | 2572 |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական ապահովագրության գծով | 420 | - | 94 |
| Ընդամենը ընթացիկ պարտավորություններ | 490 | 8450 | 2666 |
| ՀԱՇՎԵԿՇԻՌ | 500 | 3000 | 215 |

*Ձեւ N2*

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**
**01.01.2010 թ.,**

| Ցուցանիշի անվանումը | տող | Նախորդ տարի (միջանկյալ ժամանակաշրջան` աճողական) | Հաշվետու տարի (միջանկյալ ժամանակաշրջան` աճողական) |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ | 010 | 5822 | 26804 |
| Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք | 020 | (7700) | (5000) |
| Համախառն շահույթ (վնաս) | 030 | (1878) | 21804 |
| Իրացման ծախսեր | 040 | - | (4238) |
| Վարչական ծախսեր | 050 | (1822) | (1477) |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս) | 060 | (3700) | 16089 |
| Գործառնական այլ ծախսեր, այդ թվում | 080 | - | (23144) |
| հ/վ | 081 | - | (23144) |
| Գործառնական շահույթ (վնաս) | 090 | (3700) | (7055) |
| Սովորական գործունեությունից շահույթ (վնաս) | 140 | (3700) | (7055) |
| Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը | 160 | (3700) | (7055) |
| Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում) | 170 | (1800) | - |
| Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո | 180 | (5500) | (7055) |

Բացառապես գործում է հաստատագրված վճարով

Ղեկավար Ա. Ղարախանյան
Կ.Տ.
Գլխավոր հաշվապահ

AMERIABANK

## Հայտարարություն

Որպես խորին հարգանքի տուրք` Ամերիաբանկը Հայոց ցեղասպանության զոհերի ժառանգորդներին AXA Settlement Claim հիմնադրամի կողմից չեկերով փոխհատուցվող գումարների տրամադրումը կատարում է անվճար:

Գումարների ստացման համար անհրաժեշտ է այցելել Ամերիաբանկ ՓԲԸ Կենտրոն մասնաճյուղ, հասցե` ք. Երեւան, Վ. Սարգսյան 2, 4 հեռախոս` 56 11 11:

USAID FROM THE AMERICAN PEOPLE
MOBILIZING ACTION AGAINST CORRUPTION

**Հատուկ հրավեր Հայաստանի գործարար ոլորտի ղեկավարներին` մասնակցելու մարտի 24-ին կայանալիք «Ազնիվ կորպորատիվ համակարգի ամրապնդում» թեմայով համաժողովին**

ԱՄՆ ՄԶԳ Հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման ծրագիրը (ՀԳՄԾ), ՀՀ էկոնոմիկայի նախարարության եւ ԱՄՆ ՄԶԳ Մրցունակ մասնավոր հատված Հայաստանում ծրագրի հետ համատեղ, պատիվ ունի հրավիրելու մասնավոր ոլորտի, կառավարության, զարգացման գործակալությունների եւ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին` մասնակցելու «Ազնիվ կորպորատիվ համակարգի ամրապնդում» թեմայով համաժողովին:

Համաժողովին ներկա կլինեն Միջազգային առեւտրային պալատի/Փարիզ, Վերակառուցման եւ զարգացման Եվրոպական բանկի (EBRD) եւ միջազգային զարգացման այլ բանկերի, հայաստանյան եւ արտասահմանյան ձեռնարկությունների, կառավարության եւ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ, ովքեր կներկայացնեն ու կքննարկեն մասնավոր ոլորտում ազնիվ կորպորատիվ համակարգի ամրապնդմանը խթանող հակակոռուպցիոն միջոցառումները:

Համաժողովը տեղի կունենա 2010թ. մարտի 24 ին` չորեքշաբթի օրը, ժամը 10:00-ին Երեւանի «Անի Պլազա» հյուրանոցի «Անի» խորհրդակցությունների սրահում (գրանցումն սկսվում է 9:30-ին):

Մասնակիցներից պետք է հաստատեն իրենց մասնակցությունը` կապվելով տկն. Քրիստինե Գրիգորյանի հետ **kgrigoryan@casals.com** փոստային հասցեով կամ գրանցվելով հետեւյալ կայքէջում **http://www.maac.am/:**

Ռիելթոր Ֆլորես Աճուրդի Տուն ՍՊԸ-ն իրականացնելու է ՎՏԲ-Հայաստան Բանկ ՓԲԸ-ի կողմից օտարման ներկայացված ստորեւ նշված գույքի աճուրդային վաճառքը`

1. Բնակարան: ք. Երեւան, Ն. Նորք 8 զ., 19 շ., բն. 22 (ընդ. մակերեսը 73.09 քմ): Մեկն. գինը` 9500000 դրամ:

2. Բնակարան: Հասցե` ք. Երեւան, Մանթաշյան 10ա շ., բն. 50 (ընդ. մակերեսը 76 քմ): Մեկն. գինը` 19000000 դրամ:

3. Բնակելի տուն: Հասցե` Լոռու մարզ, գ. Այգում (ընդ. մակերեսը 326.8 քմ, տնամերձ 0.392 քմ եւ 78.3 քմ շինություններ): Մեկն. գինը` 19000000 դրամ:

4. Բնակարան: ք. Երեւան, Նուբարաշեն խճ., 5/3 շ., բն. 1 (ընդ. մակերեսը 46.8 քմ): Մեկն. գինը` 7000000 դրամ:

5. Բնակարան: ք. Չարենցավան, 6-րդ թաղ., 25 շ., բն. 26 (ընդ. մակերեսը 93 քմ): Մեկն. գինը` 6000000 դրամ:

Աճուրդի փուլերը` դասական, այնուհետեւ հոլանդական (գնի նվազեցում) եղանակով 19.04.2010թ-ից մինչեւ 30.12.2010թ. յուր. աշխ. օր ժ.13.00-ից Ադամանդ ԵԱՀ Բորսայի հարթակում`ք. Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում: Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել` 56-52-28, 56-31-15 կամ այցելել **www.borsa.am** կայքը:

## ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն մշակվում է **«ՄԿՇԳ Էներգիա» ՍՊԸ-ի** կողմից ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի վարչական տարածքի «Ջոր» կոչվող հատվածում կառուցվող «Մարտունի» ՓՀԷԿ-ի նոր ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ բնապահպանության նախարարություն (հասցեն` Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2010 թ. մարտի 22-ին, ժամը 16-ին Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

*ՀՀ բնապահպանության նախարարություն*

## ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն մշակվում է ՀՀ Սյունիքի մարզում գործող **«Էնգելս Թումանյան» ՍՊԸ** Դավիթ Բեկ համայնքի ոռոգման ջրագծի դյուկերի ամենացածր նիշում «Գեւորգավան ՀԷԿ-1» ՓՀԷԿ-ի կառուցման նոր ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ բնապահպանության նախարարություն (հասցեն` Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2010 թ. մարտի 22-ին, ժամը 16-ին Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

*ՀՀ բնապահպանության նախարարություն*

**ՀՀ կենտրոնական բանկը տեղեկացնում է, որ արժութային շուկայում ձեւավորվել են հետեւյալ արտարժույթների միջին փոխարժեքները. 15.03.2010 թ.**

| ISO-ի կոդը | Միավոր | Արտարժույթ | Միջին փոխարժեք |
|---|---|---|---|
| USD | 1 | ԱՄՆ դոլար | 394.48 |
| EUR | 1 | ԵՎՐՈ | 540.91 |
| RUR | 1 | Ռուս. ռուբլի | 13.44 |
| GEL | 1 | Վրաց. լարի | 229.08 |

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ` 58-29-60

Լրատվական գործունէութիւն իրականացնող` «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը` 02 Ա N 047261, տրուած` 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ` 3000, ստորագրուած է տպագրութեան` 15.03.2010, գինը` 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում` Իսահակեան 28: